

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԳԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՄՈՎՍԻՍՅԱՆ ԱՐՏԱԿ ԵՐՋԱՆԻԿԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱՎՈՐ ՄՇԱԿՈՒՅԹԸ
ՆԱԽԱՄԱՇՏՈՑՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

Է.00.01 «ՀԱՅՈՅ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» ՄԱՄՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ
ՊԱՏՄԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈԿՏՈՐԻ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՅՄԱՆ
ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2015

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ պատմական գիտությունների դոկտոր
ԴԱՆԻԵԼՅԱՆ Է. Լ.

պատմական գիտությունների դոկտոր
ՔՈՍՅԱՆ Ա. Վ.

բանասիրական գիտությունների դոկտոր
ԵՂԻԱԶԱՐՅԱՆ Վ. Ա.

Առաջատար կազմակերպություն՝ Խաչատուր Աբովյանի անվան
Հայկական պետական մանկավարժական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2015 թ. սեպտեմբերի 22-ին, ժամը 14⁰⁰-ին ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում գործող ԲՈՂ-ի Հայոց պատմության 004 մասնագիտական խորհրդի նիստում (հասցեն՝ 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա, 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2015 թ. օգոստոսի 7-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ



ՍՈՒՐԱԴՅԱՆ Գ.Ղ.

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Գիրն իրավամբ դասվում է մարդկության մեծագույն նվաճումների շարքը: Գրի շնորհիվ են պահպանվում և ապագային փոխանցվում մարդկանց մտքերն ու նվաճումները: Իբրև մշակութային երևույթ՝ այն երևան է գալիս բավականին ուշ՝ սկզբնավորվելով հասարակական նկատելի վերելք ապրած ժողովուրդների մոտ: Գիրն առաջ է գալիս իբրև քաղաքակրթության ծնունդ և դառնում վերջինիս շարժիչ ուժը:

Նախամաշտոցյան Հայաստանի գրի և դպրության հարցը հատուկ ուշադրության առարկա է եղել դեռևս հայոց այբուբենի ստեղծումից առաջ՝ Մեսրոպ Մաշտոցի որոնումների ժամանակ: Հայտնի է, որ երբ Մաշտոցը և կաթողիկոս Սահակ Պարթևը ներկայացան ու իրենց մտադրությունը հայտնեցին Վռամշապուհ արքային, վերջինս նրանց հաղորդեց, որ տեղյակ է Միջագետքի հյուսիսում պահպանված հայոց հին գրերի մասին: Դանիել անունով ասորի եպիսկոպոսից բերված գրանշանները, սակայն, չբավարարեցին խնդրի լիակատար լուծմանը, և Մաշտոցը ձեռնամուխ եղավ նոր գրային համակարգի ստեղծմանը:

Հարցի նկատմամբ հետաքրքրությունը չմարեց նաև հետագա դարերում, ինչի վկայություններն են բազմաթիվ մատենագրական տեղեկությունները: Հարցը շատ ավելի լայն քննարկումների ու բանավեճերի առարկա դարձավ նոր ժամանակների գիտության մեջ:

Հայոց դպրության պատմությունն ընդունված է բաժանել երկու մեծ դարաշրջանների՝ նախամաշտոցյան և մաշտոցյան: Երկրորդի դեպքում մենք գործ ունենք աշխարհի ամենակատարյալ այբուբեններից մեկի հիմքով ստեղծված մշակույթի հետ, որի համաշխարհային նշանակությունն անուրանալի է: Այս դարաշրջանն սկսվեց՝ հիմքում ունենալով գրի զարգացման ամենաբարձր աստիճանը՝ այբուբենը: Մինչդեռ առաջին՝ նախամաշտոցյան դարաշրջանի ակունքները հասնում են մինչև նախապատմական ժամանակաշրջաններ, սկզբնավորվում քարի դարի վերջով թվագրվող ժայռապատկերներից, զուգահեռ ընթանում հայ ժողովրդի ծագմանն ու կազմավորմանը, հայկական պետականությունների զարգացմանը: Դրանով էլ պայմանավորված՝ այն դարձել է մեծաթիվ ուսումնասիրությունների ու բուռն քննարկումների առարկա: Այս առումով Հայաստանի նախամաշտոցյան դպրության ուսումնասիրությունն արդիական է բոլոր ժամանակներում, քանի որ այն ճանաչելի է դարձնում ոչ միայն գրավոր մշակույթի մի մեծ դարաշրջանը, այլև մեր ազգային մի շարք առանձնահատկություններ՝ իրենց պատմական զարգացման ընթացքում: Այս թեմայի

ուսումնասիրությունը բացահայտում է նաև այն հիմքերը, որոնց վրա բարձրացավ հայոց դպրության Ոսկեդարը:

Աշխատանքի նպատակն ու խնդիրները: Սույն ատենախոսական հետազոտությունը նվիրված է Հայաստանի նախանաշտոցյան դպրության ուսումնասիրությանը: Մեր նպատակն է համակողմանի ուսումնասիրության ենթարկել հիմնախնդիրը՝ մինչ օրս հայտնի ողջ նյութի հետազոտության հիմամբ, հնարավորինս բացահայտել բնագավառի մինչ օրս չլուսաբանված կամ քիչ լուսաբանված հարցերը: Այդ նպատակով սկզբնաղբյուրների հանգամանալի վկայակոչմամբ նախ կներկայացնենք հիմնախնդրի ուսումնասիրության պատմությունն ինչպես հայ և օտար մատենագրության էջերում, այնպես էլ նոր ժամանակների գիտության մեջ: Այնուհետև ցայսօր կուսակված ողջ նյութի հիմամբ կփորձենք մանրամասնորեն վերականգնել հայաստանյան գրավոր մշակույթի ծագման ու զարգացման պատմությունը՝ սկզբից մինչև Մեսրոպ Մաշտոցի գյուտը: Այդ նպատակով Հայաստանում ստեղծված մինչնաշտոցյան շրջանի ողջ գրավոր նյութը կարգադասել ենք ըստ ծագման ու պատկանելության, ըստ այդմ էլ գլուխների ենք բաժանել քննարկման առարկա ողջ նյութը:

Ուսումնասիրության ժամանակագրական և աշխարհագրական սահմանները: Ինչպես նշվեց, հետազոտությունը վերաբերում է Հայկական լեռնաշխարհում գրի սկզբնավորումից մինչև Մեսրոպ Մաշտոցի գյուտն ընկած ժամանակաշրջանը: Բացի այդ, աշխատանքում քննարկվում են նաև քրիստոնեական դարաշրջանում մեհենագրերի կիրառման վերապրուկային դրսևորումները, որոնք հասնում են մինչև մեր օրերը:

Ուսումնասիրության նյութի աշխարհագրական սահմանները հիմնականում վերաբերում են Հայկական լեռնաշխարհին: «Նախանաշտոցյան Հայաստան» ընդհանրական անվան տակ աշխատանքում ընդգրկված են ինչպես Հայկական լեռնաշխարհը, այնպես էլ հարակից այն տարածքները, որոնք մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում գտնվել են հայկական թագավորությունների կազմում: Գրային հուշարձանների տարածման աշխարհագրությունն ակնհայտ դարձնելու նպատակով ներկայացվող աշխատության էջերում գետնից ենք քարտեզներ:

Հիմնախնդրի ուսումնասիրվածության աստիճանը: Չնայած բազմաթիվ սկզբնաղբյուրների և ուսումնասիրությունների առկայությանը, հիմնախնդիրը բազմաթիվ հարցերում մնացել է չլուսաբանված, քիչ չեն նաև թերի, ոչ լիակատար պատկերացումները: Վերջին տասնամյակներում հարցի քննարկումների ժամանակ, փոխարենն առկա ամբողջ նյութը հավաքելու և ուսումնասիրելու, ավելի հաճախ բավարարվել են տեսական դիտարկումներով և անցյալում արդեն բազմիցս չարչրկված մատենագրա-

կան տեղեկությունների անպտուղ վերաքննարկումներով: Երբ կան հազարավոր հնագիտական փաստեր, տրամաբանական չէ դրանք մի կողմ թողնելը և, փոխարենը, դրանց մասին դարեր անց պահպանված մատենագրական տեղեկությունները քննարկելը:

Ցավոք, մինչ օրս ի մի չեն բերվել և համապարփակ ուսումնասիրության առարկա դարձել նախամաշտոցյան Հայաստանից մեզ հասած բոլոր գրավոր հուշարձաններն ու դրանց առնչվող տեղեկությունները: Նախամաշտոցյան Հայաստանի գրավոր բոլոր հուշարձանների հրատարակումը կոթողային մի մատենաշարով մնում է հայագիտության չլուծված կարևորագույն խնդիրներից մեկը:

Ատենախոսության փորձաքննությունը: Ատենախոսությունը քննարկվել ու հրապարակային պաշտպանության է երաշխավորվել Երևանի պետական համալսարանի Հայոց պատմության ամբիոնի կողմից: Ուսումնասիրության հիմնական դրույթները լուսաբանվել են հեղինակի հրատարակած մենագրություններում և հոդվածներում:

Ուսումնասիրության աղբյուրագիտական հենքը: Ներկայացվող աշխատանքում ուսումնասիրության նյութ են դարձված Հայկական լեռնաշխարհում գրի ծագման և զարգացման վաղ փուլերը (նախագրային դրսևորումները), նախամաշտոցյան Հայաստանում կիրառված գրային համակարգերը՝ իրենց առանձնահատկություններով, ինչպես նաև ի մի են բերվել Հայաստանից գտնված տեղական և օտար ծագում ունեցող արձանագրությունների մասին տեղեկությունները:

Հետազոտությունը կատարված է երկու տեսակի սկզբնաղբյուրների հենքի վրա՝ գրավոր աղբյուրների հաղորդումների և հնագիտական հայտնաբերումների: Մատենագիրների երկերի և հնագիտական պեղումների արդյունքների հրապարակումներից բացի օգտագործել ենք աշխարհի տարբեր թանգարանների կատալոգները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության թանգարաններում պահվող բազմաթիվ նյութեր, որոնք առաջին անգամ ուսումնասիրվել և շրջանառության մեջ են դրվել մեր կողմից: Կարևորել ենք նաև նախորդ ուսումնասիրողների եզրահանգումները, որոնք կատարվել են նշված աղբյուրագիտական խմբերից ստացված փաստերի հիմամբ:

Հետազոտության մեթոդաբանական հիմքը: Աշխատանքի մեթոդաբանական հիմքը կազմում է պատմաճանաչողությունը՝ սկզբնաղբյուրների տվյալների քննական վերլուծությամբ և նորոպի մեկնաբանմամբ: Ուսումնասիրության ընթացքում առաջնորդվել ենք սկզբնաղբյուրների համադրման, համեմատական, համակողմանի և քննական վերլուծության սկզբունքներով:

Աշխատանքի գիտական նորույթն ու գործնական նշանակությունը:

Հայաստանի նախամաշտոցյան գրավոր մշակույթի բնագավառում մեր ուսումնասիրությունները սկսել ենք 1990-ական թթ. առաջին կեսին: Հայկական մեհենագրության կարևորագույն փուլերից մեկի՝ Վանի թագավորության մեհենագրության հետազոտության արդյունքում մեզ հաջողվեց ոչ միայն վերականգնել գրային համակարգի ամբողջական պատկերն ու կազմել առաջին լիակատար նշանացանկն ու արձանագրությունների ժողովածուն, այլև 1995 թ. ստանալ գրահամակարգի վերծանության բանալին: Վանի թագավորության մեհենագրության ուսումնասիրությունը 1997 թ. ներկայացնելով որպես ատենախոսություն՝ ստացանք պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

Այնուհետև, ավելի ընդլայնելով հետազոտության դաշտը և ընդգրկելով ամբողջ նախամաշտոցյան դպրությունը, հավաքեցինք ու համակարգեցինք հրապարակի վրա եղած ամբողջ նյութը: Մեր հետազոտությունից առաջ ընդունված էր նախամաշտոցյան դպրությունը բաժանել երեք փուլի՝ նախնադարյան նշանագրություն, Վանի թագավորության մեհենագրություն և Վանի թագավորության անկումից մինչև քրիստոնեության պետական կրոն հռչակումը ժամանակաշրջանի, որի ընթացքում գործածվում էին գերազանցապես օտար գրեր:

Մենք նախ առանձնացրեցինք գիր և նախագիր հասկացությունների դրսևորումները Հայկական լեռնաշխարհում: Մինչևուրարտական ժամանակաշրջանը բաժանեցինք զարգացած պատկերագրության՝ գաղափարագրության, և Հայաստանի գծային գրի փուլերի, վերականգնելով այդ պատկերագրային համակարգերի պատկերը, ինչը չէր արվել մեզանից առաջ: Առաջին անգամ մեր կողմից գիտական ուսումնասիրության հիմքի վրա դրվեց մի գրահամակարգ և՛ Հայաստանի երկրորդ սեպագիր համակարգը: Համակարգված ուսումնասիրության առարկա դարձրեցինք և լուսաբանեցինք հայկական մեհենագրերի կիրառության մի շարք դրսևորումները չորրորդ դարից մինչև մեր օրերը:

Ի՞նչ կարող է տալ այս ուսումնասիրությունը: Նախ և առաջ այն ունի ճանաչողական նշանակություն. ամբողջությամբ լուսաբանում է հայոց գրավոր մշակույթի առաջին կեսի պատմությունը, օգնում է հասկանալ դրա հետ կապված բազմաթիվ խնդիրներ, այդ թվում՝ այն նախադրյալները, որոնք ծնունդ տվեցին մեր մշակույթի Ոսկեդարին: Ուսումնասիրությունն օգտակար կլինի քննարկվող բնագավառների (պատմագիտություն, բանասիրություն, գրաբանություն և այլն) հետազոտողների համար: Այն նաև կարող է դառնալ ձեռնարկ բուհական ուսանողության համար: Եվ, վերջապես,

կարող է բավարարել հիմնախնդրով հետաքրքրված ընթերցող լայն խավերի հետաքրքրությունը:

Աշխատանքի կառուցվածքը: Աշխատանքը բաղկացած է առաջաբանից, վեց գլխից, եզրակացությունից, օգտագործված աղբյուրների ու գրականության ցանկից և երեք հավելվածից (նկարներ, աղյուսակներ, քարտեզներ):

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆՊԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Առաջաբանում հիմնավորվում է թեմայի արդիականությունը, ներկայացվում են հետազոտության նպատակն ու խնդիրները, ժամանակագրական և աշխարհագրական սահմանները, հիմնախնդրի ուսումնասիրվածության աստիճանը, գիտական նորույթն ու գործնական նշանակությունը:

Առաջին գլխում ներկայացվում է հիմնախնդրի ուսումնասիրության պատմությունը: Գլուխը բաժանված է երկու մեծ բաժինների՝

1) Հին և միջնադարյան գրավոր աղբյուրների տեղեկությունները նախամաշտոցյան Հայաստանում գոյություն ունեցած գրերի և դպրության մասին,

2) Նախամաշտոցյան Հայաստանի դպրության հարցը նոր ժամանակների պատմագրության մեջ:

Բուն նյութին անցնելուց առաջ նախ ներկայացվում են հայագիտության մեջ շրջանառված հորինված ու կեղծ տեղեկությունները, որոնք են դարձել սխալ եզրահանգումների: Այդպիսիք են, մասնավորապես, պոնտացի հույն Տիրանիոն քերականի՝ «Հայկազն» լինելու մասին կեղծ տեղեկությունը, Օդեսայում գտնված եթովպական գրով մի ձեռագրի ներկայացվելը իբրև նախամաշտոցյան հայերեն դպրության ապացույց, հորինվածքը, թե իբր Փիլոն Եբրայեցին վկայել է իր ժամանակ հայերեն թարգմանված գրքերի, հետևաբար, նախամաշտոցյան հայ դպրության մասին, Իրանի Քրդստան նահանգի Ավրոման բնակավայրից գտնված բնագրերը Հայաստանի Կորդվաց աշխարհի հետ կապելը, նաև այլ «հայտնագործություններ», որոնք որևէ իրական կապ չունեն գիտության հետ:

Հայաստանում նախամաշտոցյան դարաշրջանի գրավոր մշակույթի մասին հին և միջնադարյան գրավոր աղբյուրների տեղեկությունները ներկայացված են երեք ենթաբաժնով՝

ա/ Գրավոր աղբյուրների վկայություններ նախամաշտոցյան Հայաստանում գոյություն ունեցած հայալեզու և հայագիր դպրության մասին¹,

¹ Այդպիսի վկայություններից են Փիլոստրատոսի տեղեկությունը Արշակ արքայի (I դար) մկիրաբերած հայագիր ոսկյա ժանյակի մասին (տես՝ Philostratus, The Life of Apollonius

բ/ Մատենագրական տեղեկություններ նախամաշտոցյան Հայաստանում գործածված այլ լեզուների և գրերի մասին²,

գ/ Վկայություններ նախամաշտոցյան Հայաստանում գրերի կիրառման մասին, որոնցում չի որոշակիացվում թե ինչ լեզվով էին դրանք գրված³:

Առաջին գլխի երկրորդ բաժնում ներկայացված են նոր ժամանակների պատմաբանասիրական աշխատանքներում հիմնախնդրի մասին եղած տեսակետները: Տեսակետներն այնքան բազմազան են և մանրամասներով իրարից տարբերվող, որ դժվար էր դրանք խմբավորելն ըստ տեսակների, ուստի դրանք ներկայացված են՝ ըստ ժամանակագրական հերթականության՝ սկսած հայ նոր պատմագրության հայր Միքայել Չամչյանցից (XVIII դար)⁴:

of Tyana, vol. I, London, 1912, էջ 120-121; Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա (այսուհետ՝ ՀԺՊՔ), հ. 1, Ե., 2007, էջ 508-509, թարգմ. Ի. Հարությունյանի), Հիպպոլիտիս Հռոմեացու 234-235 թթ. գրված «Ժամանակագրության» մեջ հայերի նշվելը սեփական դպրություն ունեցող ժողովուրդների շարքում (գիրք VII, գլ. 19), Ագաթանգեղոսի հաղորդումները նախաքրիստոնեական Հայաստանում դպրության աստծո՝ Տիրի պաշտամունքի և նշանագրության վերաբերյալ (Ագաթանգեղոս, Առաջաբան, 12-13; Ը, 99; ԺՁ, 176; ԾԸ, 778), Մովսես Խորենացու հաղորդումը II-III դարերում Դարանադիաց Անի ամրոցում մեհենագրական պատմագրության արխիվի մասին, որից ասորի մատենագիր Բարդաձանը (Բար Դայանը) թարգմանություններ է կատարել ասորերեն ու հունարեն (Մովսես Խորենացի, Բ, ԿԶ), Գևորգ Ասորու տեղեկությունը Գրիգոր Լուսավորչի մանուկ հասակում Հայաստանում սեփական, հայալեզու գրի գոյության մասին (Տաշեան Յ., Ագաթանգեղոս առ Գեորգեայ Ասորի եպիսկոպոսին եւ ուսումնասիրութիւն Ագաթանգեղեայ գրոց, Վիեննա, 1891, էջ 4; Մեքրնյան Հ., Հայ-ասորական հարաբերությունների պատմությունից (III-IV դարեր), Երևան, 1970, էջ 190-191; ՀԺՊՔ, հ. 1, Ե., 2007, էջ 511-512) և այլն:

² Այս խմբի վկայությունները շատ ավելի մեծաթիվ են: Դրանցից հնագույնը Մովսես Խորենացու հաղորդումն է Շամիրամին վերագրվող Վանի թագավորության սեպագիր արձանագրությունների վերաբերյալ (գիրք Ա, գլ. ԺԶ): Պատմահայրն ունի օտար գրերի կիրառման մասին բազմաթիվ այլ տեղեկություններ: Հման ուղղակի և անուղղակի վկայություններ են հաղորդում Քսենոփոնը, Դիոդորոս Սիկիլիացին, Պլուտարքոսը, Ագաթանգեղոսը, Փավստոս Բուզանդը, Դավթար Փարպեցին, Մեքեոսը և այլք (բոլոր այդ վկայությունները՝ հղումներով հանդերձ, տես Ա. Մովսիսյան, Նախամաշտոցյան Հայաստանի գրային համակարգերը, Ե., 2003, էջ 219-226):

³ Այս խմբին են վերաբերում Հայաստանի Ք.ա. III-II հազ. վաղ պետական կազմավորումներում (Արատտա, Մուբուր, Հայասա) գրերի գործածության վկայությունները՝ առանց դրանց լեզվի մատնանշման (Ա. Մովսիսյան, Հայաստանը Քրիստոսից առաջ երրորդ հազարամյակում (ըստ գրավոր աղբյուրների), Ե., 2005, էջ 102-103; Մարտիրոսեան Ն., Խայացիներու լեզուն եւ մեր գիրի առեղծուածը Ս. Մեսրոպէ առաջ, - Խարբերդ եւ ամոր ոսկեղէն դաշտը. Յուշամատենան, Նյի Եորք, 1959, էջ 131-134): Նույնպիսին են տեղեկությունները Տիգրան Երվանդյանի և Արատաշես արքայի բանաստեղծ որդի Վրույրի մասին (Քսենոփոն, Կյուրոպեդիա, գիրք Բ, գլ. I, 14; Մովսես Խորենացի, գիրք Ա, գլ. ԻԹ; գիրք Բ, գլ. ԾԳ):

⁴ Նախամաշտոցյան Հայաստանում հայալեզու դպրության գոյությունն ընդունող և չընդունող գիտնականների առավել ամբողջական ցանկը՝ հայտնած տեսակետներով,

Առկա տեսակետները՝ կարելի է խմբավորել հետևյալ կերպ.

1. Հայաստանում նախամաշտոցյան օտարալեզու գրականության փաստն ընդունում են բոլոր ուսումնասիրողները, քանի որ կան այդ մասին վկայող և՛ մատենագրական տեղեկություններ, և՛ բազմաթիվ հայտնաբերված արձանագրություններ:

2. Հայալեզու նախամեսրոպյան դպրության հարցում ուսումնասիրողները կիսվել են երկու հիմնական խմբի: Ընդունողների հիմնական փաստարկներն են դպրության աստծո գոյությունը նախաքրիստոնեական հայկական դիցարանում, հայտնաբերված արձանագրությունները, մատենագրական տեղեկությունները, որոնք վկայում են հայալեզու դպրության մասին, հայկական դարավոր նախաքրիստոնեական պետականությունը, որը չէր կարող գոյատևել առանց հայերեն դպրության և, ի վերջո, հինգերորդ դարում գրավոր հայերենի զարգացման խիստ կատարյալ վիճակը, ինչը հնարավոր չէր լինի առանց նախընթաց դարավոր դպրության:

3. Նախամաշտոցյան հայալեզու դպրության հնարավորությունը մերժողների գլխավոր փաստարկը արձանագրությունների բացակայությունն է: Եթե այդ փաստարկը կարելի էր հասկանալ մինչև 1930-ական թվականները, երբ գտնված հատուկեմտ և հստակ չթվագրվող արձանագրությունների հիմամբ հնարավոր չէր վերջնականապես եզրակացնել հայալեզու դպրության գոյությունը, ապա այսօր այն լիովին մերժելի է, քանի որ XX դարավերջին և XXI դարասկզբին համակարգվեցին ու հրատարակվեցին հայկական մեհենագրության տարբեր փուլերին վերաբերող մի քանի հարգարկիր նյութեր:

4. Քննարկվել է օտարագիր հայալեզու դպրության գոյության խնդիրը, հատկապես, 301-405 թվականների ընթացքում, երբ մեհենագրությունն արգելվեց, իսկ քրիստոնեության քարոզչության երկու լեզուները հունարենն ու ասորերենն էին: Այստեղ չունենք նյութական վկայություններ, սակայն կան մատենագրական տեղեկություններ՝ հօգուտ օտարագիր հայալեզու գրականության: Այդ է վկայում նաև պարզ տրամաբանությունը:

5. Առավել քննարկված խնդիրներից է «Դանիելյան» գրահամակարգի բնութագիրը, որի մասին հայտնվել են ամենատարբեր կարծիքներ⁵: Հինգերորդ դարի հայ պատմիչներից ոչ մեկը չի նշում Դանիելի մոտ պահ-

տե՛ս Ի. Յարության, Հայոց գիրը, Թիֆլիս, 1892, էջ 261-301; Հր. Աճառյան, Հայոց գրերը, Ե., 1984, էջ 474-555; Ա.Գ. Աբրահամյան, Նախամաշտոցյան հայ գիր և գրչություն, Ե., 1982, էջ 7-43; Կ. Թոխաթեան, Մաշտոցեան տառածեղերի եւ դրանց ժայռապատկեր մնամակների աղբյուրների շուրջ, «Բազմավեպ», 2003, N 1-4, էջ 51-80:

⁵ Դրանց զգալի մասը տե՛ս Հր. Աճառյան, Հայոց գրերը, էջ 96-110, 431-460; Ա.Գ. Աբրահամյան, Նախամաշտոցյան հայ գիր և գրչություն, էջ 129-142; Ա. Եղիայեան, Մեսրոպեան տառերու ակունքները, Անթիլիաս, 2005, էջ 215-263 (հղումներով հանդերձ):

պանված գրանշանների թիվը և ստույգ ծագումը, իսկ հետագա դարերում, նաև նոր ժամանակների պատմագիտության մեջ դրանց վերագրվել են քանակություններ՝ 17, 22, 24, 29, որոնք կապվում են փյունիկյան, արամեական, ասորական, հունական այբուբենների հետ կամ այն մտքի, որ Մաշտոցը ստեղծել է միայն ձայնավոր հնչյունների նշանները: Դատելով մատենագրական հաղորդումներից, հատկապես, Ղազար Փարպեցու կարևոր մի հաղորդումից, մենք կարծում ենք, որ Դանիելի մոտ պահպանվածը ոչ թե այբուբեն էր 2-3 տասնյակ նշաններով, այլ՝ հայկական մեհենագրային համակարգը, որի գրանշանների թիվն անցնում էր երկու հարյուրից:

Երկրորդ գլուխը («Նախամաշտոցյան Յայաստանում ստեղծված և կիրառված գրային համակարգերը») նվիրված է բնիկ հայկական համակարգի՝ մեհենագրության ծագմանն ու զարգացմանը, տարբեր ժամանակաշրջաններում ունեցած փուլերին ու դրսևորումներին:

Գլուխն իր հերթին բաժանված է վեց բաժինների: Առաջին բաժնում ներկայացված է գրի ծագման ու զարգացման նախափուլը Յայկական լեռնաշխարհում: Այդ փուլի ուսումնասիրության նյութը ժայռապատկերներն են, «առարկայական գրի» նմուշները: Յայաստանի ժայռապատկերները գրի զարգացման տեսանկյունից կարելի է բաժանել երկու հիմնական խմբի: Առաջին խմբի ժայռապատկերներն ունեն զուտ նկարագրական պատկերային բնույթ. դրանք պարզ նկարներ են: Երկրորդ խմբում, որն ավելի զարգացած աստիճան է, ի հայտ են գալիս խորհրդանշաններ (սիմվոլներ): Դրանք ժայռապատկերներում հանդես են գալիս սկսած Ք. ա. մոտ V հազարամյակից և բազմաթիվ զուգահեռներ ունեն համաժամանակյա հնագիտական իրերի վրա⁶: Այդ ժամանակաշրջանից էլ Յայաստանում վաղ պատկերագրության ներսում ձևավորվում է զարգացած պատկերագրությունը՝ գաղափարագրությունը, որը լայն տարածում է ստանում Ք.ա. IV-III հազարամյակներում:

Առաջին գլխի երկրորդ բաժնում («Յայաստանի զարգացած պատկերագրությունը (գաղափարագրությունը). Գրային մտածողությունը Յայկա-

⁶ Հայկական լեռնաշխարհի պատկերագրության զարգացման նախնական փուլերի, հատկապես, ժայռապատկերների մասին հանգամանալի հղումներով տես Գ.Հ. Կարախանյան, Պ.Գ. Սաֆյան, Սյունիքի ժայռապատկերները, Ե., 1970; Հ. Ա. Մարտիրոսյան, Հ. Ռ. Իսրայելյան, Գեղամա լեռների ժայռապատկերները, հ. I, Ե., 1971; M. Uyanik, Petroglyphs of South-Eastern Anatolia, Graz, 1974; Կ. Թոխաթեան, Մաշտոցեան տառածեւերի..., էջ 81-90; Ս. Պետրոսյան, Հայկական ժայռապատկերներ, Ե., 2005; A. Ohandjanian, L. Awanessian, Felszeichnungen in Armenien. Auswirkungen auf des Leben des armenischen Volkes, Wien, 2007; Ս. Սարգսյան, Ժայռապատկերներ, Ե., 2010; Shahinyan S. M., Petroglyphs and ancient symbols of Armenian Highland, Yerevan, 2010և այլն:

կան լեռնաշխարհում վաղ բրոնզի դարաշրջանում») գրի պատմության տեսանկյունից քննարկվում է Հայաստանի վաղբրոնզեդարյան ժամանակաշրջանը, որը մեր պատմության մեջ նաև պետականության ծագման ու զարգացման դարաշրջանն է: Մատնանշվում է, որ չնայած կուտակված ահռելի նյութին՝ այս փուլի հուշարձանները դեռևս չեն հավաքվել և համակարգված ուսումնասիրության ենթարկվել, ուստի մնում են չվերծանված: Գրի (զարգացած պատկերագրության) առկայությունը Հայկական լեռնաշխարհում Ք.ա. III հազարամյակի սկզբին հավաստվում է ոչ միայն հնագիտական գտածոներով, այլև օտար աղբյուրների վկայությամբ. ըստ շումերական բնագրերի՝ Հայկական լեռնաշխարհում այսօր հայտնի առաջին Արատտա պետությունն ուներ սեփական գիր⁷:

Երրորդ բաժինը կրում է «Հայաստանի գծային գիրը» վերնագիրը և նվիրված է Ք.ա. III հազարամյակում պատկերագրերի զարգացմամբ և պարզեցմամբ ստեղծված գծային գրերի համակարգի ուսումնասիրությանը: Այն բաղկացած է 400-500 նշաններից և կիրառվում է մինչև Ք.ա. I հազ. սկզբը: Այս համակարգի շուրջ 300 արձանագրություններ են գտնվել Հայաստանի տասից ավելի հնավայրերից, որոնք դեռևս վերծանված չեն⁸:

Չորրորդ բաժինը նվիրված է Վանի թագավորության մեհենագրությանը: Վանի թագավորությունում գործածվել են երեք գրային համակարգեր, որոնցից երկուսը սեպագիր են և ներմուծված Միջագետքից: Միակ տեղական ծագում ունեցողը վանյան (բիսինա-ուրարտա-արարտյան) մեհենագիր համակարգն է՝ բաղկացած շուրջ 300 մեհենանշաններից (հիերոգլիֆներից), որոնք գրվել են աջից ձախ և վերից վար ուղղություններով: Բաժնում հանգամանորեն ներկայացված են ինչպես արձանագրությունների հայտնաբերման, այնպես էլ գրահամակարգի ուսումնասիրության և վերծանության պատմությունները: Ներկայումս վերծանված ու մեկնաբանված են շուրջ 60 մեհենագրեր, որոնց ուսումնասիրությունը թույլ է տալիս

⁷ Վաղ բրոնզի դարաշրջանում Հայկական լեռնաշխարհում պատկերագրության օրինակները տես՝ Հ. Ա. Մարտիրոսյան, Հայաստանի նախնադարյան նշանագրերը և նրանց ուրարտա-հայկական կրկնակները, Երևան, 1973, էջ 68-70, աղ. XXIII, Կ. Чубинишвили, К древней истории Южного Кавказа, Тбилиси, 1971, աղ. XXVII, A. G. Sagona, The Caucasian Region in the Early Bronze Age, Part III, Oxford, 1984, նկ. 115-124, C. Marro, La culture du Haut-Euphrate au Bronze ancien. Essai d'interprétation à partir de la céramique peinte de Keban (Turquie), "Varia Anatolica", VIII, Paris, 1997, աղ. 86-92, P. de Miroschedji, La céramique de Khirbet Kerak en Syro-Paléatine: Etat de la question, "Varia Anatolica", XI (Chronologies des pays du Caucase et de l'Euphrate aux IV^e-III^e millénaires), Paris, 2000, p. 275, նկ. 4 և այլն:

⁸ Այս գրահամակարգի մասին (մանրամասն հղումներով) տես՝ Ա. Մովսիսյան, Հայաստանի գծային գիրը (Ք.ա. III-I հազարամյակներ), «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», հ. XVIII, Ե., 1999, էջ 202-210; Ա. Մովսիսյան, Հայկական մեհենագրություն, Երևան, 2003, էջ 14-19:

մեծ հավանականությամբ եզրակացնելու, որ վանյան մեհենագրության լեզուն հնագույն հայերենն է: Իսկ դա նշանակում է, որ մենք այսօր կարող ենք խոսել Մեսրոպ Մաշտոցի համճարեղ գյուտից տասնչորս դար առաջ հայերենի՝ գրավոր լեզու դարձած լինելու մասին⁹:

Հինգերորդ բաժնում քննարկման նյութ է դարձված հայկական մեհենագրության ճակատագիրը Վանի թագավորության անկումից մինչև քրիստոնեության պետական կրոն հռչակումը Հայաստանում: Այս ժամանակաշրջանում հայկական մեհենագրության կիրառությունը սահմանափակվում է հիմնականում մեհյաններում, իսկ թագավորական իշխանության կողմից գործածվում են ներմուծված օտար այբբենական գրերը (ի տարբերություն նախկինում գործածված բառային ու բառավանկային համակարգերի):

Վեցերորդ բաժինը վերաբերում է հայկական մեհենագրության գործածության, այսպես կոչված, գաղտնի փուլին: Քրիստոնեության պետական կրոն հռչակումից հետո հայկական մեհենագրության գործածությունն արգելվեց, իսկ մեհենանշանները տարբեր դրսևորումներով (հմայագրեր¹⁰, վարպետների նշաններ¹¹, «Նշանագիրք իմաստնոց» ցանկեր¹², մոզական դաջվածքներ¹³ և այլն) շարունակեցին կիրառվել: Դրանցից մեկի՝ հմայագրության կիրառությունը (առանց նշանների իմաստի ընկալման) շարունակվում է նաև մեր օրերում: Ուշագրավ է քրիստոնեական տաճարների պատերին մեհենական նշանագրերի հայտնվելու երևույթը, որը կարող է

⁹ Գրահամակարգի մասին հանգամանորեն տե՛ս Մ.Ա. Барсегян, Об урартской иероглифической письменности, *ԼՀԳ*, 1967, N 2, с. 85-90; R.D. Barnett, The hieroglyphic writing of Urartu, *Anatolian Studies presented to H.G. Güterborck, Istanbul, 1974*, p. 43-55, plates XI-XIII, XXIX; Ա. Մովսիսյան, Վանի թագավորության (Քիսայնիի, Ուրարտու, Արարատ) մեհենագրությունը, *ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ.*, Ե., 1998; Ա. Մովսիսյան, Հայկական մեհենագրություն, էջ 46-126, արձանագրությունների և մեմանշանների դիվանը՝ էջ 189-269; A. Movsisyan, The hieroglyphic script of Van Kingdom: The perspectives of decipherment, "Aramazd. Armenian Journal of Near Eastern Studies", vol. V, issue 1, Yerevan, 2010, p. 166-183:

¹⁰ Ա. Անայան, Հայկական մատենագիտության, հ. Ա, Ե., 1959, էջ 423-467 («Ախտարական գրականություն» հոդվածը); Լ. Խաչիկյան, Նախամաշտոցյան գրի հարցը և հմայագրությունը, *ՊԲՀ*, 1963, N 4, էջ 145-167; А. А. Одабашян, Народные верования армян (По материалам рукописных талисманов XV-XIX вв.) "Кавказский этнографический сборник", Москва, VI, 1976, с. 107-130, էջ 107-130; Ա. Մովսիսյան, Հայկական մեհենագրություն, էջ 129-131:

¹¹ Տե՛ս, օրինակ, Ստ. Խ. Մնացականյան, Միջնադարյան Հայաստանի շինարարական գործի կազմակերպման մի քանի հարցեր և քարագործ վարպետների նշանագրերը, *ՊԲՀ*, 1958, 3, էջ 84-105; И. Е. Гельб, Опыт изучения письма, М., 1982, էջ 45; Ա. Մովսիսյան, Հայկական մեհենագրություն, էջ 132-133 և այլն:

¹² Տե՛ս, Հր. Աճառյան, Հայոց գրերը, էջ 408-430 (հեղինակի կազմած ցանկը զետեղված է գրքի վերջում, իբրև հավելված); Ա. Գ. Աբրահամյան, Հայ գրի և գրչության պատմություն, Ե., 1959, էջ 139-173; Ա. Գ. Աբրահամյան, Հայ գիր և գրչություն, Ե., 1973, էջ 201-243:

¹³ Գ. Սրվանձտյանց, Երկեր, հ. 2, Ե., 1982, էջ 438-439:

կապվել միջնադարում նախաքրիստոնեական հավատալիքների կրողների հարատևման հետ:

Երրորդ գլուխը («Նախամաշտոցյան Հայաստանում հայտնաբերված հստակ չթվագրվող և առեղծվածային նշանագրային հուշարձաններ») բաժանված է երկու բաժինների՝

ա) հստակ չթվագրվող նշանագրային հուշարձաններ,

բ) առեղծվածային նշանագրային հուշարձաններ:

Առաջին բաժնում ներկայացված են նշանակիր վիշապաքարերը, որոնք թվագրվում են Վանի թագավորությանը նախորդող ժամանակաշրջանով (առանց որոշակիացման), և օձապատկեր զերեզմանաքարերը, որոնք, թերևս, միջնադարի գործեր են, սակայն իրենց պատկերագրության մտածողությամբ ունեն ակնհայտ նախաքրիստոնեական բնույթ¹⁴: Նշվածներից բացի գտնվել են նաև հստակ չթվագրվող և եզակի օրինակներով հայտնի հուշարձաններ¹⁵:

Երկրորդ բաժնում ներկայացված են զգալի թվով առեղծվածային նշանագրային հուշարձանները, որոնցում հստակ ընդգծվում է երկու նոր նշանային համակարգ:

Առաջինը Հայաստանում առկա նոր սեպագիր համակարգն է, որը լիովին տարբերվում է մինչ օրս աշխարհում հայտնի սեպագիր մյուս համակարգերից: Ամենայն հավանականությամբ, դա եղել է սեպագիր այբուբեն, որը, դատելով առկա փաստերից, կարող էր ստեղծված լինել Ք.ա. XII-IX/VIII դարերում, թեև չի բացառվում թվագրման հնարավոր այլ տարբերակ¹⁶:

Երկրորդ խումբը կազմում են առեղծվածային ժայռափոր հսկայա-նշանները, որոնք բնորոշ են միայն Հայկական լեռնաշխարհին: Չափազանց դժվար է որոշակի կարծիք հայտնելը ոչ միայն դրանց ժամանակագրության, այլ նույնիսկ նպատակադրման մասին (կա կարծիք, որ դրանք ոչ թե գաղափարանշաններ են, այլ տնտեսական նշանակության փորվածքներ)¹⁷:

¹⁴ Ա. Գրիգորյան, Օձապատկեր տապանաքարեր, «Մշակույթ», 1990, N 2.3, էջ 99:

¹⁵ Ա. Մովսիսյան, Հայկական մեհենագրություն, էջ 128, 149:

¹⁶ Գրահամակարգի մասին տե՛ս Ա. Մովսիսյան, Նոր սեպագիր այբուբեն^Գ (Կարմիր բերդի առեղծվածային սեպագիր արձանագրության շուրջ), ՊԲՀ, 2001, N 3, էջ 221-226; Ա. Մովսիսյան, Նախամաշտոցյան Հայաստանի գրային համակարգերը, էջ 200-208:

¹⁷ C. F. Lehmann-Haupt, Armenien Einst und Jetzt, II a, Berlin und Leipzig, 1926, S. 105, Յեր. Լալայան, Դամբարանների պեղումներ Խորհրդային Հայաստանում, Յեր., 1931, էջ 203, Թ. Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության (Աշխատությունների ժողովածու), Երևան, MCMXLII (=1942), էջ 18-19, O. Belli, Monumentale Felszeichen im Bereich urartäischer Festungsanlagen, “Anadolu Araştırmaları”, 1989, XI, S. 89-105, աղ. 1-XVI, N. Başgelen, Atabindi kaya işaretleri, “Arkeoloji ve Sanat”,

Նշված երկու համակարգերից բացի կան նաև եզակի օրինակներով հանդիպող առեղծվածային նշանագիր հուշարձաններ¹⁸: Թե՛ այդ նշանային համակարգերը, թե՛ եզակի օրինակներով հայտնի առեղծվածային հուշարձանները սպասում են իրենց վերծանողներին:

Չորրորդ գլխում («Այլ երկրներում ստեղծված և նախամաշտոցյան Չայաստանում կիրառված գրային համակարգերը») ներկայացվում է Չայաստանի նախամաշտոցյան դպրության չափազանց կարևոր մի մասը: Դա այն մեծ գրավոր ժառանգությունն է, որ մեր նախնիները ստեղծել են ներմուծված օտար գրային համակարգերով: Նախամաշտոցյան շրջանում (մեհենագրությանը զուգահեռ) կիրառվել են այդպիսի յոթ գրային համակարգեր, ուստի և այս գլուխը բաժանված է յոթ բաժինների: Նշված գրահամակարգերով մեզ հասած արձանագրությունների տարածման քարտեզները գտեղծված են ատենախոսության Չավելված Գ-ում:

ա) Առաջին բաժինը նվիրված է Չայաստան ներմուծված առաջին գրահամակարգին, որը կիրառվել է շուրջ յոթ դար: Բ.ա. XV-VIII դարերում Չայկական լեռնաշխարհի արևմուտքում՝ Եփրատի հովտում, ներմուծվում և կիրառվում են խեթա-լուվիական հիերոգլիֆները՝ գրված լուվիերենով: Գրային համակարգը բաղկացած է եղել շուրջ 500 հիերոգլիֆներից, ունեցել է գրության բուստրոֆեդեն (ամեն հաջորդ տողը նախորդին հակառակ) ուղղություն¹⁹:

բ) Երկրորդ և երրորդ ներմուծված համակարգերը Վանի թագավորությունում լայն կիրառություն ստացած սեպագիր համակարգերն են: Նախ գործածվել է ասորեստանյան սեպագիրը (շուրջ 600 նշան՝ ձախից աջ գրությամբ): Սարգուրի Ա արքայի օրոք (Բ.ա. մոտ 840-825թթ.) կանգնեցվել են ասորեստանյան սեպագրերով ասուրերեն գրված արձանագրություններ: Այդ արքայից հետո ասուրերենով բնագրերը հանդիպում են

46-49, 1990, p. 24-26, նկ. 1-12, O. Belli, Surveys of Monumental Urartian Rock Signs in East Anatolia, in: Istanbul University's Contributions to Archaeology in Turkey (1932-2000) (edited by O. Belli), Istanbul, 2001, p. 365-369, V. Sevin, Urartular'a ait dünyanın en eski Karayolu, "Anadolu Araştırmaları", 1989, XI, p. 50-51, աղ. IV-2, V-1, Ա. Մովսիսյան, Նախամաշտոցյան Հայաստանի գրային համակարգերը, էջ 208-211; Ա. Մովսիսյան, Հայկական մեհենագրություն, էջ 144-147:

¹⁸ Ա. Մովսիսյան, Նախամաշտոցյան Հայաստանի գրային համակարգերը, էջ 211-212:

¹⁹ Խեթա-լուվիական հիերոգլիֆներով արձանագրություններ են հայտնաբերվել են Ծոփքի հնավայրերից (H. G. Güterbock, Hittite Hieroglyphic Seal Impressions from Korucutepe, "Journal of Near Eastern Studies", 1973, vol. 32, N. 1-2 (January-April), p. 135-147, աղ. 3-5), Մելիղ-Թեգարամայի տարածքից (տե՛ս H. T. Bossert, Altanatolien, Berlin, 1942, S. 67-70, 181-190, նկ. 763-795, P. Meriggi, Manuale di eteo geroglifico, II, Roma, 1975, NN 97-119, J. D. Hawkins, Corpus of Hieroglyphic Luwian Inscriptions, vol. 1, Inscriptions of the Iron Age, Berlin-New York, 2000, p. 282-329, աղ. 133-164), Կումմուխ-Կումմազենից (P. Meriggi, նշվ. աշխ, NN 124-131, J. D. Hawkins, նշվ. աշխ, p. 334-360): Տե՛ս նաև Ա. Մովսիսյան, Նախամաշտոցյան Հայաստանի գրային համակարգերը, էջ 50-61, 282-321:

Վանի տիրակալների երկլեզու կոթողներում՝ գրված ուրարտական տեքստերից հետո, թարգմանելով վերջիններին: Ասուրերենն իր սեպագրով կիրառվել է նաև Խալդի աստծո պաշտամունքի գլխավոր կենտրոն Արդինի-Մուսասիրում²⁰:

զ) Սիջազեոքյան (ասորեստանյան) սեպագրի բարեփոխմամբ Իշպուհինի արքայի օրոք (Ք.ա. մոտ 825-810 թթ.) ստեղծվեց տեղական սեպագրային համակարգը: Ասուրա-բաբելոնյան սեպագրությունը բաղկացած էր շուրջ 600 նշանից, որոնցից յուրաքանչյուրն ուներ մի քանի, երբեմն 10-ից ավելի տարբեր ընթերցում: Ընդհանուր առմամբ, այն արտահայտում էր շուրջ 3000 վանկ և բառ: Վանի թագավորության սեպագրությունը վերցրեց ընդամենը շուրջ 200 նշաններ, որոնք հիմնականում ունեին մեկ ընթերցում և հազվադեպ էին հանդիպում երկու կամ երեք նշանակությամբ: Յր. Աճառյանի գնահատմամբ՝ այդ բարեփոխման արդյունքում «սեպագրի դժվարությունը 95 % հապավվեց», մի բան, որը հնարավոր չէր լինի Յայաստանում առանց ձևավորված գրավոր ավանդույթի ու մտածողության²¹: Բիայնական սեպագիր համակարգով մեզ են հասել ավելի քան 600 մեծ ու փոքր արձանագրություններ: Շուրջ 130 հնավայրերից հայտնաբերված այդ արձանագրությունները թողնվել են քարակոթողների, կավե սալիկների, մետաղյա և այլ տարատեսակ առարկաների վրա: Դրանք անգնահա-

²⁰ C. F. Lehmann-Haupt, Materialien zur älteren Geschichte Armeniens und Mesopotamiens, Abhandlungen der Königlich-Gesellschaft der Wissenschaften zu Göttingen, Philologisch-historische Klasse, Neue Folge, Band IX, Nro. 3, Berlin, 1907, S. 63, F. Thureau-Dangin, Une relation de la huitième campagne de Sargon (714 av. J.-C.), Paris, 1912, p. XII, И. М. Дьяконов, Ассиро-вавилонские источники по истории Урарту, ВДИ, 1951, N 2-4, N 48, Г. А. Меликишвили, Урартские клинообразные надписи, М., 1960, с. 117-118, 125-131, 323-327, R. M. Boehmer, Zur Stelle von Topzava, "Baghdader Mitteilungen", Bd. 10, 1979, S. 50-51, աղ. 12, Հ. Հ. Կարազյոզյան, Ուրարտական արքյուրները Հայկական լեռնաշխարհի և հարևան պետությունների մասին, Հայ ժողովրդի պատմության քրեատոմատիա, 1, Երևան, 1981, էջ 37-93, M. Salvini, Eine vergessene Felsinschrift mit einem assyrischen Opfertext, Societies and Languages of the Ancient Near East (Studies in honour of I. M. Diakonoff), Warminster, 1982, S. 327-332, L. Vanden Berge, L. de Meyer, Urartu. Een vergeten cultuur uit het bergland Armenië, Gent, 1982-1983, p. 223, I. M. Diakonoff, On some new trends in Urartian philology and some new Urartian texts, AMI, 1989, Bd. 22, p. 93, B. André-Salvini, M. Salvini, The Urartian Rock Inscriptions of Razliq and Našteban (East Azerbaijan, Iran), SMEA, 1999, fasc. XLI / 1, p. 21, Н. В. Арутюнян, նշվ.աշխ., с. 9-12, 25-30, 137-139, 289-294, B. André-Salvini, M. Salvini, The Bilingual Stele of Rusa I from Movana (West-Azerbaijan, Iran), SMEA, 2002, fasc. XLIV / 1, p. 5-66 և այլն: Տե՛ս նաև Ա. Մովսիսյան, Նախամաշտոցյան Հայաստանի գրային համակարգերը, էջ 62-69 (ասուրա-բաբելական սեպագրերի նշանացանկը՝ էջ 322-368):

²¹ Գրային այս բարեփոխման մասին տե՛ս Գ. А. Меликишвили, նշվ. աշխ., էջ 33-35, Հր. Աճառյան, Հայոց գրերը, Երևան, 1984, էջ 399-402:

տելիորեն կարևոր սկզբնաղբյուրներ են Հայաստանի հնագույն պատմության լուսաբանման համար²²:

դ) Վանի թագավորությունից հետո Հայաստանում մեծ նախադրությամբ զուգահեռ գործածվում են ներմուծված այբուբենները: Ք.ա. III դարից մինչև Մեսրոպ Մաշտոցի գյուտը Հայաստանում ամենալայն տարածումը ստանում է հունական այբուբենը (ծախից աջ գրություն, 24 տառ): Այդ ժամանակաշրջանից մեզ հասած հունարեն արձանագրությունները նաև բացառիկ կարևոր պատմական սկզբնաղբյուրներ են: Հունագիր են նաև հայկական նախաքրիստոնեական դրամների ճնշող մեծամասնությունը²³: Քրիստոնեության պետական կրոն հռչակումից հետո Հայաստանում հունարենի լայն կիրառությունը շարունակվում է, հատկապես, կրոնական քարոզչության նպատակով: Դատելով մեզ հասած տեղեկություններից, IV

²² Վանի թագավորության սեպագիր արձանագրությունների ուսումնասիրության պատմությունը՝ գրականության հանգամանալի վկայակոչումներով, տես Բ. Բ. Пиотровский, Ванское царство (Урарту), М., 1959, с. 7-26, Գ. Բ. Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն. Նախագրային ժամանակաշրջան, Երևան, 1987, էջ 417-445, Մ. Լ. Хачикян, Хурритский и урартский языки, Е., 1985, с. 10-14, 135-137, М. Salvini, Geschichte und Kultur der urartäer, Darmstadt, 1995, S. 5-14, մատենագիտական ցանկը՝ S. 211-238, Հ. Հ. Կարապոյզյան, Մեպագիր տեղանուններ (Այրարատում եւ հարակից մահանգներում), Հայկական լեռնաշխարհը սեպագիր աղբյուրներում, հատոր I, գիրք I, Երևան, 1998, էջ 7-10 և այլն:

Մինչ այժմ հրատարակված արձանագրությունների ժողովածուներն են՝ А. Н. Sayce, The cuneiform inscriptions of Van, "Journal of the Royal Asiatic Society of Great Britain and Ireland", London, 1882, XIV, N 3-4 (լրացումները լույս են տեսել "Journal of the Royal Asiatic Society of Great Britain and Ireland" հանդեսի 1888-1932 թթ. համարներում), J. Sandaljian, Les inscriptions cunéiformes urartiques, Venise, 1900 (լրացումները՝ «Հանդես Ամսօրեայ»-ի 1913 թ. համարներում), Corpus Inscriptionum Chaldicarum (In Verbindung mit F. Bagel und F. Schachermeyr herausgegeben von C. F. Lehmann-Haupt), I-II, Berlin und Leipzig, 1928-1935 (որը Կ. Ֆ. Լեհման-Հաուպտի մահվան պատճառով մնաց անավարտ), F. W. König, Handbuch der chaldischen Inschriften, I-II, Graz, 1955-1957, Գ. А. Меликишвили, նշվ. աշխ. (լրացումները՝ Գ. А. Меликишвили, Урартские клинообразные надписи, ВДИ, 1971, N 3-4), Н. В. Арутюнян, Корпус урартских клинообразных надписей, Е., 2001; Salvini M., Corpus dei testi urartei, vol. I, Le iscrizioni su pietra e roccia. I Testi, "Documenta Asiana" VIII/1, 2, 3, Roma, 2008, vol. I: Texte; vol. II: Thesaurus; vol. III: Album de planches photographiques comprenant.

²³ Հայկական հունագիր դրամների մասին տես ՀԺՊ (ակադ. հրատ.), հ. I, էջ 692-698 (բաժնի հեղինակ՝ Խ. Ա. Մուշեղյան), P. Z. Bedoukian, Coinage of the Artaxiads of Armenia, London, 1978 (հատկապես էջ 42-43-ում), Խ. Ա. Մուշեղյան, Հայաստանի դրամական զանձերը, Երևան, 1973, էջ 78-81, Խ. Ա. Մուշեղյան, Գրամական շրջանառությունը Հայաստանում (մ.թ.ա. V դ. – մ.թ. XIV դ.), Երևան, 1983, էջ 43-67, Պոտոկեան, 1983, P. Z. Bedoukian, Coinage of the Armenian Kingdoms of Sophene and Commagene, Los Angeles, 1985, p. 15-18, 29-31, 36-37, Y. T. Nercessian, Armenian Coins and their Values, Los Angeles, 1995, p. 47-101, Y. T. Nercessian, Armenian Numismatic Studies, Los Angeles, 2000, p. 1-206 և այլն (նաև հղված աղբյուրները):

դարում հունական այբուբենը կիրառվել է մաև իբրև հունատառ հայերեն դարութեան միջոց²⁴:

Ե) Յաջորդ այբուբենը (հինգերորդ ներմուծված գրահամակարգը), որ կիրառվել է Յայաստանում, արամեականն է (22 տառ, բաղաձայնային, աջից ձախ գրությամբ): Յայաստանում հայտնաբերված արամեատառ արձանագրությունները թվագրվում են Ք.ա. II - Ք.ժ. II դարերով: Չնայած մինչ օրս կուտակված զգալի նյութին, այդ արձանագրությունների վերծանութունը և լեզվի խնդիրը չի կարելի համարել վերջնականապես պարզված²⁵:

²⁴ Նախամաշտոցյան Հայաստանի հունագիր հուշարձանների հրապարակումները տե՛ս K. Humann und O. Puschtein, *Reisen in Kleinasien und Nordsyrien*, Textband, Berlin, 1890, S. 232-352, P. G. Jerphanion, P. L. Jalabert, *Inscriptions d'Asie Mineure (Pont, Cappadoce, Cilice)*, "Mélanges de la Faculté Orientale de l'Université Saint-Joseph", III, Fasc. I, Beyrouth, 1908, p. 470 (N 59), C. F. Lehmann-Haupt, *Eine griechische Inschrift*, "Klio", VIII, 1908, S. 497-520, C. F. Lehmann-Haupt, *Armenien Einst und Jetzt*, I, Berlin und Leipzig, 1910, S. 410-421, M. И. Ростовцев, *Апаранская греческая надпись царя Тиридата*, (Анийская серия, N 6), СПб., 1911, с. 1-32, L. Jalabert, R. Mouterde, *Inscriptions grecques et latines de la Syrie*, t. I, Commagene et Cythestique, Paris, 1929, p. 9-60, Б. Луин, *Археологические находки 1935-1936 гг. в окрестностях станиц Тульской и Даховской близ Майкопа*, ВДИ, 1939, N 3, с. 220-223, А. И. Болтунова, *Греческие надписи Армавира*, СՀԳ, 1942, N 1-2, Հ. Մանանդյան, *Արմավիրի հունարեն արձանագրությունները նոր լուսաբանությամբ*, Երևան, 1946 (հայերեն և ռուսերեն), К. В. Тревер, *Надпись о построении армянской крепости Гарни*, Л., 1949, Г. И. Гоян, *2000 лет армянского театра*, т. I, *Театр древней Армении*, М., 1952, с. 377-388, К. В. Тревер, *Очерки по истории культуры древней Армении (Ив. до н.э. – IV в. н.э.)*, М.-Л., 1953, с. 104-161, 174-211, 224-261, 271-288, Г. Х. Саркисян, *Тигранакерт*, М., 1960, с. 76-86, Գ. Խ. Սարգսյան, *Նախամեսրոպյան շրջանի հայ պատմագրությունը*, ՊԲՀ, 1969, N 1, էջ 112-113, Ա. Ա. Մարտիրոսյան, *Հայաստանը և առաջին Սասանյանները*, ՊԲՀ, 1975, N 3, էջ 192 (թարգմանությունը Հ. Բարթիկյանի), E. Lipinski, *Studies in aramaic inscriptions and onomastics*, Leuven, 1975, p. 197-208, Б. Н. Аракелян, *Очерки по истории искусства Древней Армении (VI в. до н.э. - III в. н.э.)*, Е., 1976, с. 89-100, Հ. Մանանդյան, Երկեր, հ. Բ, Երևան, 1978, էջ 124-126, Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիս, էջ 359-363 (թարգմանությունը Ս. Գ. Կրկյաշարյանի); Ա. Մովսիսյան, *Նախամաշտոցյան Հայաստանի գրային համակարգերը*, էջ 111-163 և այլն:

²⁵ Հայկական լեռնաշխարհի տարածքից հայտնաբերված արամեագիր հուշարձանների մասին տե՛ս Յեր. Լալայան, նշվ. աշխ., էջ 97-98, А. Я. Борисов, *Надписи Артаксия (Арташеса), царя Армении*, ВДИ, 1946, N 2, с. 97-107, A. Dupont-Sommer, *Les inscriptions arameennes trouvees pres du lac Sevan (Armenie)*, "Syria", XXV, N 1-2, 1946-1948, p. 53-66, К. В. Тревер, *Очерки по истории культуры древней Армении (Ив. до н.э. – IV в. н.э.)*, М.-Л., 1953, с. 162-174, И. М. Дьяконов, К. Б. Старкова, *Надписи Артаксия (Арташеса), царя Армении*, ВДИ, 1955, N 2, с. 161-174, Г. А. Тирация н, *Опыт периодизации истории материальной культуры древней Армении*, СՀԳ, 1957, N 2, с. 82, 105-109, Г. А. Тирация, *Новонайденная надпись Арташеса I, царя Армении*, ВДИ, 1959, N 1, с. 88-90, А. Г. Периханиян, *Арамейская надпись из Гарни*, ՊԲՀ, 1964, N 3, с. 123-137, А. Г. Периханиян, *Арамейская надпись из Зангезура*, ՊԲՀ, 1965, N 4, с. 107-128, И. Н. Винников, *Об одной арамейской печати в собраниях Государственного Эрмитажа в Ленинграде*, *Краткие сообщения Института народов Азии*, 86, *История и филология Ближнего Востока*, Семиотолога, М., 1965, с. 18-19, рис. 1-2, A. Perikhanian, *Une inscription araméenne du roi Artasès*

զ) Քրիստոնեության պետական կրոն հռչակումից հետո Հայաստանում արքունի գրագրության, հոգևոր քարոզչության և ուսման ասպարեզներում Տրդատ Գ-ի հրամանով հունարենին զուգահեռ կիրառվում է նաև ստորերենն՝ իր այբուբենով (22 տառ, բաղաձայնային, աջից ձախ գրությամբ): Թեպետ այդ նասին միաբերան վկայուն են մեր մատենագիրները, նշենք, որ IV դարից ասորագիր որևէ հուշարձան չի հայտնաբերվել: Ինչպես հունական այբուբենը, ասորականը ևս, ամենայն հավանականությամբ, IV դարում կիրառվել է իբրև միջոց օտարագիր հայերենի համար:

է) Համաձայն մատենագրական հաղորդումների՝ Տրդատ Գ-ի սահմանած կարգը խախտվում է Խոսրով արքայի գահընկեցությունից (389 թ.) հետո: Արևելյան Հայաստանում արքունի գրագրության մեջ սկսում է գործածվել է պահլավերենը (միջին պարսկերենը, նույնպես 22 տառ՝ աջից ձախ գրությամբ), իսկ հոգևոր քարոզչության բնագավառում տիրապետող է դառնում ասորերենը: Հունարենն, իբրև Բյուզանդիայի ազդեցության մի-

trouvée au Zanguézour (Siwnik), "Revue des Etudes Armeniennes" (այսուհետ՝ REA), 1966, vol. III, p. 17-29, A. Г. Перыхаян, Арамейская надпись на серебряной чаше из Сисана, ՊԲՀ, 1971, N 3, с. 78-82, A. Perikhanian, Les inscriptions du roi Artaches (A propos d'une récente trouvaille épigraphique en Arménie), REA, 1971, vol. VIII, p. 169-174, A. Perikhanian, Inscription araméenne grave sur une coupe d'argent trouvée à Sisian (Arménie), REA, 1971, vol. VIII, p. 5-11, pl. I-II, Գ. Կարախանյան, Արամեական նորահայտ երկու արձանագրություններ, ՊԲՀ, 1971, N 3, էջ 274-276, E. Lipinski, Studies in aramaic inscriptions and onomastics, Leuven, 1975, p. 197-208, Գ. Տիրացյան, Արտաշես I-ի ևս մեկ նորագյուտ արամեական արձանագրություն, ՊԲՀ, 1977, N 4, էջ 254-259, Գ. А. Тирация, Еще одна арамейская надпись Арташеса I, царя Армении, ВДИ, 1980, N 4, с. 99-104, Б. Н. Аракелян, Арташат I. Основные результаты раскопок 1970-1977 гг., Е., 1982, с. 33, табл. ХLI, Գ. А. Тирация, Культура древней Армении VI в. до н. э. - III в. н. э. (по археологическим данным), Е., 1988, с. 66, табл. XVI-9, Khurshudian E., A Coin of Mitridat, King of Tosp, Oriental Numismatic Society, Newsletter, No. 157, Autumn 1998, p. 8, Хуршудян Э., Монета Митридата царя Тоспа, «Արձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», հ. XVII, Երևան, 1998, էջ 167-174, Ռ. Բիշինե, Հ. Հակոբյան, Ս. Հմայակյան, Ն. Պարմեջիանի, Արտաշես արքայի նորահայտ սահմանաքարը Սարուխանից, Հին Հայաստանի պատմության և մշակույթի հարցեր. Գևորգ Տիրացյանի հիշատակին նվիրված գիտաժողովի զեկուցումներ, Երևան, 2001, էջ 79-82, Ժ. Խաչատրյան, Ի. Կարապետյան, Ռ. Կարդանյան, Բ. Կանեցյան, Արտաշատի 1998-1999 թթ. պեղումների արդյունքները, Հին Հայաստանի մշակույթը, XII, Հանրապետական գիտական նստաշրջան, Չեկուցումների հիմնադրույթներ (նվիրվում է ակադ. Բաբելեն Առաքելյանի ծննդյան 90-ամյակին), Երևան., 2002, էջ 51-54, Ն. Հազեյան, Հ. Հակոբյան, Ս. Հմայակյան, Երկու նոր Արտաշեսյան սահմանաքար Վարդենիկից, Հայաստանի հնագույն մշակույթը, 2, Էմմա Խանգաղյանի հոբելյանին նվիրված գիտաժողովի նյութեր, Երևան, 2002, էջ 76-77, Ս. Գ. Հմայակյան, Արտաշեսյան սահմանաքարերի շուրջ, Հայաստանի հնագույն մշակույթը, 2, Էմմա Խանգաղյանի հոբելյանին նվիրված գիտաժողովի նյութեր, Երևան, 2002, էջ 76-76, Ա. Մովսիսյան, Նախամաշտոցյան Հայաստանի գրային համակարգերը, էջ 89-108; Hakobyan H., Hmayakyan S., Recently Found Boundary Stelae from Sevan Lake Basin, "Aramazd. Armenian Journal of Near Eastern Studies", vol. III, issue 2, Yerevan, 2008, p. 181-189 և այլն (գրականության հղումներով):

ջոց, չի խրախուսվում 387 թվականից Սասանյան Պարսկաստանի գերիշխանության տակ հայտնված Հայաստանի մեծ մասում: Նշենք, որ այս դեպքում ևս առկա են միայն մատենագրական վկայություններ. IV դարից պարսկագիր որևէ հուշարձան Հայաստանում չի հայտնաբերվել²⁶:

Ի մի բերելով այս գլխում շարադրված ողջ նյութը՝ տեսնում ենք, որ նախամաշտոցյան Հայաստանում շուրջ երկու հազար տարվա ընթացքում (Ք.ա. XV դարից մինչև Ք.ծ. V դարը) ներմուծվել և տեղական մեհենագրության կողքին գործածվել են յոթ օտար գրային համակարգեր: Սա ավելի քան խոսում վկայությունն է մեր նախնիների՝ գրի ու գրականության նկատմամբ տածած հարգանքի ու սիրո, որի պերճախոս ապացույցը դպրության աստօժ պաշտամունքն է:

Հինգերորդ գլուխը («Օտարների կողմից Հայկական լեռնաշխարհում թողնված օտարագիր հուշարձանները») նվիրված է Հայկական լեռնաշխարհում գտնված օտար գրերով և լեզուներով գրառված զանազան հուշարձանների, որոնց հեղինակները տեղացիները չեն: Դրանցից հնագույնները թվագրվում են Ք. ա. III հազարամյակով: Այդ արձանագրությունները, Հայաստանի հնագույն և հին պատմության մասին կարևորագույն սկզբնաղբյուրներ լինելով հանդերձ, հասկանալիորեն, չեն կազմում հայաստանյան դպրության բաղկացուցիչ մասը: Սակայն, թեկուզ օտարների ձեռքով ստեղծված, դրանք Հայաստանի գրավոր ժառանգության մի մասն են, ուստի և ատենախոսության մեջ ներկայացվում են առանձին գլխով՝ առանց մանրամասների և արժևորման: Հիշատակվում են ինչպես եզակի օրինակներով հանդիպող բնագրերը, այնպես էլ միևնույն գրերով և լեզուներով կանգնեցված արձանագրությունների խմբերը:

1946 թ. տեղեկություններ էին հրատարակվել Մեծ Մասիսի լանջին առկա պատկերագիր, շումերական և հին բաբելոնյան սեպագիր արձանագրությունների մասին, որոնք գրանցվել էին դեռևս առաջին աշխարհամարտի տարիներին: Վերջին տարիների ընթացքում դրանք լրացվեցին նոր հաղորդումներով և լուսանկարներով²⁷:

Հայաստանի և ողջ Հին Արևելքի Ք.ա. XXIII դարի պատմության կարևոր մի իրադարձության Աքադի տիրակալ Նարամ-Սուենի (Նարամ-Սինի) դեպի Հայկական լեռնաշխարհ կատարած արշավանքներից մեկին է վերաբերում այդ արքայի՝ Ամիդ-Դիարբեքիի շրջանից գտնված գրակիր

²⁶ Նախամաշտոցյան Հայաստանում ասորական և պահլավական (միջին պարսկական) գրերի կիրառության մասին տե՛ս Ա. Մովսիսյան, Նախամաշտոցյան Հայաստանի գրային համակարգերը, էջ 164-169:

²⁷ F. V. Kinnaman, Archaeological Notes, "Bible Archaeological Digest", 1946, oct.-dec., էջ 46-49; В. Н. Каммингс, Ноев ковчег: факты и вымыслы, М., 2001, էջ 63-70, 202-206; http://www.vonbora.org/Project_Von_Bora/4%29_83_Climb.html.

կրթողը: Միջագետքից և Փոքր Ասիայից հայտնաբերված մի շարք բնագրեր վկայում են Արման(ի/ում) երկրի դեմ նրա ձեռնարկած պատերազմ(ներ)ի մասին, և Նարամ-Սուենի արձանագրությամբ քարակոթողը (այժմ պահվում է Ստամբուլի Հին Արևելքի թանգարանում), միանգամայն իրավացիորեն, համարվում է վերջինիս իրեղեն ապացույցը²⁸:

Մինչ օրս հայտնի հնագույն խուռիերեն արձանագրությունները՝ զըրված արքայական սեպագրով (Ք.ա. XXIII-XXI դարեր) կապվում են Ուրքիշ քաղաքի հետ (Հայոց Միջագետքում), որոնք գտնվել են Մասիուս/Մասիոն լեռների հարավային լանջերին, ներկայիս թուրք-սիրիական սահմանի մոտ, Մարդին քաղաքից հարավ (Մոզան հնավայր)²⁹:

Ուշագրավ գտածոներ են Ք.ա. II հազարամյակով թվագրվող հին ասուրական³⁰, հին ու միջին բաբելական³¹ և եգիպտական³² գրակիր հուշարձանները: Հատկապես կարևոր պատմական սկզբնաղբյուրներ են Ք.ա. II-ի հազարամյակներով թվագրվող ասորեստանյան սեպագիր արձանագրությունները, որոնք թողնվել են Ասորեստանի արքաների՝ դեպի Հայկական լեռնաշխարհ կատարած արշավանքների ընթացքում³³:

²⁸ G. A. Barton, *The Royal Inscriptions of Sumer and Akkad*, Yale University press, New Haven, 1929, էջ 140-141; J. P. Naab, E. Unger, *Die Entdeckung der Stele des Naram-Sin in Pir Hüsein* (I. J. P. Naab, *Die Entdeckung der Stele des Naram-Sin in Pir Hüsein*; II. E. Unger, *Naram-Sin in Assyrien und Armenien*), Istanbul *Asariatika Müzeleri Nerşiyati*, XII, Istanbul, 1934, էջ 5-48, աղ. I-IV; D. R. Frayne, *The Royal Inscriptions of Mesopotamia, Early Periods*, Vol. 2, *Sargonic and Gutian Periods (2334-2113 BC)*, Toronto-Buffalo-London, 1993, էջ 128-129; Ա. Մովսիսյան, Հայաստանը Քրիստոսից առաջ երրորդ հազարամյակում, էջ 155-156; ՀԺՊՔ, հ. 1, Ե., 2007, էջ 58-59 և այլն:

²⁹ И. М. Дьяконов, *Языки древней Передней Азии*, Изд. "Наука", М., 1967, էջ 443-445; G. Wilhelm, *Die Inschrift des Tisatal von Urkeš*, "Bibliotheca Mesopotamica", 26, 1998, էջ 119-120; V. Vs. Ivanov, *Hurrian ENDAN "KING" and the origin of Hurrian -nd- (nasal + dental stop)*, в кн.: *История и языки Древнего Востока: Памяти И. М. Дьяконова*, Санкт-Петербург, 2002, էջ 92; Ա. Մովսիսյան, Հայաստանը Քրիստոսից առաջ երրորդ հազարամյակում, էջ 89-91; ՀԺՊՔ, հ. 1, Ե., 2007, էջ 66-67:

³⁰ H. G. Güterbock, *A Votive Sword with Old Assyrian Inscription*, *Studies in honour of B. Landsberger in his 75th birthday*, *Assyriological Studies N. 16*, Chicago, 1965, էջ 197-198, աղ. XIII-XV:

³¹ Э. В. Ханзаян, Б. Б. Пиотровский, *Цилиндрическая печать с древнеегипетской надписью из Мецаморского могильника*, ՊԲՀ, 1984, N 4, էջ 64-65; Э. В. Ханзаян, Г. Х. Саркисян, И. М. Дьяконов, *Вавилонская гиря XVI в. до н. э. с клинописной надписью из раскопок Мецамора*, "Древний Восток", 4, Ереван, 1983, էջ 113-122:

³² Э. В. Ханзаян, Б. Б. Пиотровский, *Цилиндрическая печать с древнеегипетской надписью из Мецаморского могильника*, էջ 59-65; Б. Б. Пиотровский, *Древнеегипетские предметы, найденные на территории Советского Союза*, "Советская археология", 1958, N 1, էջ 20-27; Ա. Ս. Փիլիպոսյան, Հայկական լեռնաշխարհի կնիքները Հին Արևելքի կնքագործության համակարգում, Ե., 1998, էջ 54-56, աղ. 50:

³³ E. Schrader, *Die Keilinschriften am Eingange der Quellgrotte des Sabeneh-su*, Berlin, 1885, էջ 3-31; Յ. Սանտալճևան, *Ասորեստանեաց և պարսիկ սեպագիր արձանագրութիւնք կամ քաղուածք նոցին*, որոնք Նաիրի-Ուրարտու աշխարհին պատմութեան կը վերաբե-

Չայաստանի սեպագրական ժառանգության մասն են կազմում Արմավիրից գտնված էլամերեն սեպագիր սալիկները³⁴ և Աքեմենյան Քսերքսես արքայի արձանագրությունը Վանի բերդի պատին, որը Չայաստանից գտնված միակ եռալեզու սեպագիր արձանագրությունն է³⁵:

Չայաստանի մինչնաշտոցյան ժամանակաշրջանի գրավոր հուշարձանների շարքում կարևոր տեղ գրավող լատիներեն արձանագրությունները վերաբերում են հռոմեական բանակների՝ Չայաստան կատարած արշավանքներին և կանգնեցված են բացառապես հռոմեացիների կողմից³⁶: Հռոմեական բանակների ներկայացուցիչները Չայաստանում թողել են նաև մի քանի հուճարեն արձանագրություն³⁷:

րին, Վիեննա, 1901, էջ 106-108, 131, 151-152; C. F. Lehmann-Haupt, Materialien zur älteren Geschichte Armeniens und Mesopotamiens, Abhandlungen der Königlichen Gesellschaft der Wissenschaften zu Göttingen, Philologisch-historische Klasse, Neue Folge, Band IX, Nro. 3, Berlin, 1907, էջ 16-18, 31-44; C. F. Lehmann-Haupt, Armenien Einst und Jetzt, I, Berlin und Leipzig, 1910, էջ 430-462; J. Meščaninov, E. F. Weidner, Votivperle mit assyrischer Königs-Inschrift aus Transkaukasien, "Archiv für Orientforschung", 1931-1932, Bd. VII, էջ 266-268; И. М. Дьяконов, Ассирио-авилонские источники по истории Урарту, ВДИ, 1951, N 2-4, NN 16, 17, 32, 33; Ա. Մովսիսյան, Նախամաշտոցյան Հայաստանի գրային համակարգերը, էջ 179-187:

³⁴ H. Koch, Elamisches Gilgames-Epos oder doch Verwaltungstäfelchen ?, "Zeitschrift für Assyriologie und Vorderasiatische Archäologie", 1993, Bd. 83, II, էջ 219-236; F. Vallat, La lettre élamite d'Arménie, "Zeitschrift für Assyriologie und Vorderasiatische Archäologie", 1997, Bd. 87, II., p. 258-270:

³⁵ Յ. Սամուայճեան, Ասորեստանեաց և պարսիկ սեպագիր արձանագրութիւնք ..., էջ 224-226; R. G. Kent, Old Persian. Grammar, Texts, Lexicon, New Haven, 1953, էջ 152-153; Ա. Մովսիսյան, Նախամաշտոցյան Հայաստանի գրային համակարգերը, էջ 188-189:

³⁶ Ղ. Ալիշան, Այրարատ, Վենետիկ, 1880, էջ 206; C. F. Lehmann-Haupt, Armenien Einst und Jetzt, I, էջ 477-478; L. Jalabert, R. Mouterde, Inscriptions grecques et latines de la Syrie, t. I, Commagene et Cyrhestique, Paris, 1929, էջ 42-46, 59-61; K. B. Тревер, Очерки по истории культуры древней Армении (Шв. до н.э. – IVв. н.э.), М.-Л., 1953, էջ 212-224, 262-270; Բ. Ն. Առաքելյան, Լատիներեն արձանագրություններ Արտաշատ մայրաքաղաքից, ՊԲՀ, 1964, N 4, էջ 302-311; Ռ. Մ. Թորոսյան, Ս. Մ. Կրկյաշարյան, Հնագիտական նորություններ Էջմիածնից, ՊԲՀ, 1971, N 1, էջ 286-290; E. Olshausen und J. Biller, Historisch-geographische Aspekte der Geschichte des Pontischen und Armenischen Reiches, Teil 1, Untersuchungen zur historischen Geographie von Pontos unter Mithradatiden, Wiesbaden, 1984, էջ 100-101; Ա. Մովսիսյան, Նախամաշտոցյան Հայաստանի գրային համակարգերը, էջ 190-195; Ա. Մովսիսյան, Արտաշատից հայտնաբերված լատիներեն արձանագրությամբ դրոշմված կոմիդորեր և աղյուսակներ, ՊԲՀ, 2006, N 1, էջ 230-235:

³⁷ Ս. Ա. Ժերելյով, Հունարեն դամբանական արձանագրություն գտնված Վաղարշապատում, տես Ա. Քալանթար, Հին Վաղարշապատի պեղումները, Յեր., 1935, Հավելված I, էջ 75-83 (նայերեն և ռուսերեն); Б. Н. Аракелян, Гарни, II, Результаты раскопок 1951-1955 гг., Е., 1957, էջ 63-64, աղ. XVI; Բ. Ն. Առաքելյան, Գ. Ա. Տիրացյան, Ժ. Դ. Խաչատրյան, Հին Հայաստանի պակևին (I-IV դդ.), Ե., 1969, էջ 62-63, N 136; Ֆ. Ի. Տեր-Մարտիրոսով, Արենիի հունարեն արձանագրությունը (Հայաստանի մ.թ.ա. II դարի քաղաքական իրադարձությունների շուրջը), ՊԲՀ, 1989, N 1, էջ 177-189; Ա. Մովսիսյան, Նախամաշտոցյան Հայաստանի գրային համակարգերը, էջ 195-196:

Հայաստանում հայտնաբերվել են մեծ քանակությամբ օտար երկրներում թողարկված դրամներ. կարելի է ասել, որ մեր երկրում գտնվել են Հիմ Աշխարհի առաջավորասիական տարածաշրջանի բոլոր երկրների դրամներից (աքեմենյան, հունական, մակեդոնական, սելևկյան, պարթևական, հռոմեական, պոնտական, սասանյան և այլն), որոնց մակագրությունները հունարեն են, պահլավերեն (միջին պարսկերեն) և լատիներեն³⁸:

Վեցերորդ գլխում անդրադարձ է կատարված Հայաստանի նախամաշտոցյան գրավոր մշակույթի մի քանի առանձնահատկություններին: Այն բաժանված է երեք բաժնի:

Առաջին բաժնում («Վիպասանական ավանդույթը որպես գրին փոխարինող միջոց») փորձ է արված հասկանալու, թե նախամաշտոցյան դպրության հուշարձաններում ինչու են բացակայում գրական ստեղծագործությունները. չունենք գրի առնված ռազմի, աշխատանքային, կենցաղային, հարսանեկան, սգո, սիրային և այլ երգեր, վիպասքեր, պատմական և դիցաբանական վեպեր, հիմներ և այլն: Սա այն դեպքում, երբ «Հայկ և Բել», «Արամ և Բարշամ», «Արա Գեղեցիկ և Շամիրամ», «Տիգրան և Աժդահակ», «Արտաշես և Սաթենիկ», «Արտաշես և Արտավազդ» և այլ վիպասքերը կենսունակ էին մնում նաև Մովսես Խորենացու և Գրիգոր Մագիստրոս Պահլավունու ժամանակներում: Նույն կերպ մինչև մաշտոցյան այբուբենով գրի չի առնվել «Սասնա ծռեր» էպոսը (մինչև Գարեգին Սրվանձտյանցը): Առաջ ենք քաշել տեսակետ, ըստ որի նախաքրիստոնեական Հայաստանում վիպասանական ավանդույթը ծառայել է որպես գրին փոխարինող միջոց: Ընդ որում, այդ միջոցով փոխանցվել են սրբազան (թերևս, նաև այլ) պատմությունները, որոնք նախընտրել փոխանցել բանավոր, ոչ թե արձանագրել³⁹:

Երկրորդ բաժինը («Թվերի նշան սկզբունքները նախամաշտոցյան Հայաստանի գրահամակարգերում և մաշտոցյան այբուբենի թվահամակարգը») նվիրված է հայ իրականության մեջ տարբեր ժամանակների գրահամակարգերում կիրառված թվաբանական միջոցներին: Փաստերի վերլուծությունը ցույց է տալիս, որ V և հաջորդող դարերում Հայաստանում

³⁸ Խ. Ա. Մուշեղյան, Հայաստանի դրամական զանգեղը, Ե., 1973, էջ 22-27, 33-46, 63-78, 82-123; Խ. Ա. Մուշեղյան, Գրամական շրջանառությունը Հայաստանում (մ.թ.ա. V դ. – մ.թ. XIV դ.), Ե., 1983, էջ 11-15, 29-30, 35-38, 82-89, 110-115; Khurshudian E., Zohrabian A., Sassanian coins of Armenia, Almaty, 2002, էջ 39-56, աղ. I-XV; Ա. Մովսիսյան, Նախամաշտոցյան Հայաստանի գրային համակարգերը, էջ 196-199:

³⁹ Այս խնդրին մեր հաստուկ անդրադարձը՝ Ա. Մովսիսյան, Հայկական մեհենագրություն, էջ 150-152:

շարունակվում են նախաքրիստոնեական ժամանակաշրջանից եկող թվաբանական ավանդույթները⁴⁰:

Երրորդ բաժնում («Գրային մշակույթի վիճակը IV դարի Հայաստանում») քննության առարկա է դարձված մեր դպրության պատմության յուրահատուկ և աննախադեպ հարյուրամյակի՝ IV դարի իրադրությունը: Դա մեհենագրության արգելումից մինչև մաշտոցյան դպրության ստեղծումը ձգվող հարյուրամյակն է, որի սկզբին Տրդատ Գ-ի հրամանով արքունի գրագրության, հոգևոր քարոզչության և ուսման ասպարեզներում գործածվում են հունարենն ու ասորերենը՝ իրենց այբուբեններով: Նրա սահմանած կարգը խախտվել է Խոսրով արքայի գահընկեցությունից (389 թ.) հետո. նշված երկու լեզուներով դպրություններին Արևելյան Հայաստանի պաշտոնական գրագրության համակարգում ավելացել է պահլավերենի (միջին պարսկերենի) կիրառությունը: Նոր կրոնի քարոզչական-գաղափարախոսական պահանջներով պայմանավորված՝ ստեղծվում են հիմնականում կրոնական, վկայաբանական-պատմողական բովանդակություն ունեցող գրական հուշարձաններ⁴¹: Շարունակում են շրջանառության մեջ գտնվել այն գործերը, որոնք ստեղծվել (կամ թարգմանվել) են նախաքրիստոնեական ժամանակաշրջանում և չեն արգելվել մոր կրոնի քարոզիչների կողմից (նաև հասել են V դար): Մեծագույն հավանականությամբ պետք է ընդունել օտար (հունական, ասորական, պարսկական) գրերով հայալեզու դպրության գոյությունը IV դարում: Հիմք ընդունելով թրվակական ավանդազրույցի⁴² հաղորդումը՝ կարելի է ենթադրել, որ Տրդատ Գ-ի օրոք փորձ է արվել ստեղծելու այբուբեն հայերենի համար⁴³:

Եզրակացության բաժնում, իբրև աշխատանքի հիմնական արդյունքների ամփոփում, ներկայացված է Հայաստանի նախամաշտոցյան գրավոր մշակույթի ընդհանուր բնութագիրը: Մատենագրական և հնագիտական տվյալների հետազոտություններից ստացվում է հետևյալ պատկերը.

⁴⁰ Հանգամանորեն տես Ա. Մովսիսյան, Թվերի նշման սկզբունքները նախամաշտոցյան Հայաստանի գրահամակարգերում և մաշտոցյան այբուբենի թվահամակարգը, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», հ. XXIII, Երևան, 2004, էջ 430-439:

⁴¹ Խաչիկյան, Օտարալեզու հայ գրականությունը չորրորդ դարում (Ներսես Պարթևի և Եպիփանի նորահայտ «Հարցման» առիթով), ՊԲՀ, 1973, N 3, էջ 27-51 (հղումներով հանդերձ):

⁴² Պատմութիւն Տրդատայ, 1895, էջ 75-7 Պատմութիւն Տրդատայ (Եթովպիարեն), (Ռ-ընե Բասսեի ֆրանսերեն վերձանությունից թարգմանությունը Եփրեմ Ալվեանի), «Բազմավեպ», 1895, էջ 71-76; Պատմություն Հայոց արքա Տրդատի (Թերթազի) մասին (Յոհաննես Բախմանի գերմաներեն վերձանությունից թարգմանությունը Հասմիկ Մելքոնյանի), ՀԺՊՔ, հ. 2, Ե., 2011, էջ 50-60:

⁴³ Ա. Մովսիսյան, Գրային մշակույթի վիճակը IV դարի Հայաստանում, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», հ. XXV, Երևան, 2006, էջ 228-238:

1) Հայկական լեռնաշխարհում գրի զարգացման նախափուլում («առարկայական գիր», ժայռապատկերներ, նշաններ զանազան իրերի վրա) առկա են մտքերի հաղորդման պարզունակ և վաղագույն ձևեր: Այն սկզբնավորվում է քարի դարի վերջին փուլում:

2) Ք.ա. V հազարամյակից Հայաստանում վաղ պատկերագրության ներսում ձևավորվում է զարգացած պատկերագրությունը՝ զաղափարագրությունը, որը լայն տարածում է ստանում Ք.ա. IV-III հազարամյակներում: Ք.ա. III հազարամյակի կեսերին Հայկական լեռնաշխարհի սահմաններից դուրս վաղբրոնզեդարյան մշակույթի տարածմանը զուգահեռ հայաստանյան նշանագրված խեցեղենը տարածվում է շրջակա երկրներում (հարավում մինչև Կիլիկիա, Սիրիա և Պաղեստին, հյուսիսում՝ Հյուսիսային Կովկաս):

3) Ք.ա. III հազարամյակում պատկերագրերի զարգացմամբ և պարզեցմամբ ստեղծվում է գծային գրերի մի համակարգ (բաղկացած 400-500 նշաններից), որը կիրառվում է մինչև Ք.ա. I հազ. սկիզբը: Այս համակարգի շուրջ 300 արձանագրություններ են գտնվել Հայաստանի տասից ավելի հնավայրերից, որոնք դեռևս վերծանված չեն:

4) Ք.ա. XV-VIII դարերում Հայկական լեռնաշխարհի արևմուտքում Եփրատի հովտում, ներմուծվում և կիրառվում են խեթա-լուվիական հիերոգլիֆները՝ գրված լուվիերենով: Գրային համակարգը բաղկացած է եղել շուրջ 500 հիերոգլիֆներից, ունեցել է գրության բուստորոֆեղեն (ամեն հաջորդ տողը նախորդին հակառակ) ուղղություն:

5) Վանի թագավորությունում (Բիաինլի, Ուրարտու, Արարատ) գործածվել են երեք գրային համակարգեր: Տեղական ծագում ունեցող վանյան (բիաինա-ուրարտական) մեհենագրությունը բաղկացած է շուրջ 300 մեհենանշաններից (հիերոգլիֆներից), որոնք գրվել են աջից ձախ և վերից վար ուղղություններով: Ներկայումս վերծանված ու մեկնաբանված են շուրջ 60 մեհենագրեր, որոնց ուսումնասիրությունը թույլ է տալիս ենթադրելու, որ վանյան մեհենագրության լեզուն հնագույն հայերենն է:

6) Վանի թագավորությունում Սարդուրի Ա արքայի օրոք (Ք.ա. մոտ 840-825թթ.) կանգնեցվել են ասորեստանյան սեպագրերով (շուրջ 600 նշան՝ ձախից աջ գրությամբ) ասուրերեն արձանագրություններ: Այդ արքայից հետո ասուրերենով բնագրերը հանդիպում են Վանի տիրակալների երկլեզու կոթողներում՝ գրված տեղական սեպագրին զուգահեռ՝ թարգմանելով վերջիններիս:

7) Իշպուլինի արքայի օրոք (Ք.ա. մոտ 825-810 թթ.) ստեղծվեց տեղական սեպագրային համակարգը (շուրջ 200 նշան՝ ձախից աջ գրությամբ), որով մեզ են հասել ավելի քան 600 մեծ ու փոքր արձանագրություններ:

8) Վանի թագավորության անկումից մինչև քրիստոնեության ընդունումը Հայաստանում գործածվում են այբբենական գրային համակարգեր (ի տարբերություն նախկինում գործածված բառային ու վանկային համակարգերի): Քրիստոնեության պետական կրոն հռչակումից հետո հայկական մեհենագրության գործածությունն արգելվեց, իսկ մեհենանշանները տարբեր դրսևորումներով (հմայագրեր, վարպետների նշաններ, «Նշանագիրք իմաստնոց» ցանկեր՝ համառոտագրության նշաններ, մոզական դաջվածքներ և այլն) շարունակեցին կիրառվել:

9) Ք.ա. III դարից սկսած գործածվում է հունարենն՝ իր գրով (ձախից աջ գրություն, 24 տառ), որը քրիստոնեության պետական կրոն հռչակումից հետո լայն կիրառություն է ստանում Հայաստանում, հատկապես, կրոնական քարոզչության նպատակով:

10) Ք.ա. II - Ք.հ. II դարերից մեզ են հասել արամեատառ արձանագրություններ (աջից ձախ գրությամբ), որոնց վերծանությունը և լեզվի խնդիրը չի կարելի համարել վերջնականապես պարզված:

11) Քրիստոնեության պետականացումից հետո արքունի գրագրության, հոգևոր քարոզչության և ուսման ասպարեզներում Տրդատ Գ-ի հրամանով կիրառվում են հունարենն ու ասորերենը: Նրա սահմանած կարգը խախտվել է Խոսրով արքայի գահընկեցությունից (389 թ.) հետո, երբ Արևելյան Հայաստանում արքունի գրագրության մեջ գործածվում է պահլավերենը (միջին պարսկերենը): Թե՛ ասորական և թե՛ պահլավական գրերի հիմքում ընկած է արամեական այբուբենը (22 տառ՝ աջից ձախ գրությամբ):

12) Հայկական լեռնաշխարհի տարբեր հնավայրերից գտնվել են բազմաթիվ գրակիր առարկաներ, որոնք այստեղ են հայտնվել ռազմական, առևտրա-տնտեսական, մշակութային ու այլաբնույթ հարաբերությունների արդյունքում: Սրանք թեպետ չեն կազմում հայաստանյան դպրության մասը, սակայն մտնում են նախամաշտոցյան Հայաստանի գրային հուշարձանախմբի մեջ:

13) Տակավին զգալի թիվ են կազմում անհայտ ծագումով և առեղծվածային նշանակությամբ գրային հուշարձանները, որոնցում հստակ ընդգծվում է երկու նոր գրահամակարգ: Թե՛ այդ գրահամակարգերը, թե՛ եզակի օրինակներով հայտնի առեղծվածային հուշարձանները սպասում են իրենց վերծանողներին:

Նախամաշտոցյան Հայաստանից հայտաբերված գրավոր մշակույթի հուշարձանները կարելի է խմբավորել ըստ մի քանի բնութագրական հատկանիշների:

ա) Ըստ ծագման և պատկանելության՝

1. Հայաստանում ստեղծված ու զարգացած պատկերագրային համակարգեր, որոնք բաժանվում են երկու հիմնական խմբի՝

ա) հայկական մեհենագրությունը՝ իր փուլերով,

բ) հստակ չթվագրվող, առեղծվածային արձանագրություններ, որոնք ունեն զուտ հայաստանյան ծագում,

2. օտար ծագում ունեցող, բայց Հայաստանի բնիկների կողմից կիրառված գրային համակարգեր,

3. Հայաստանի տարածքում հայտնաբերված, սակայն օտարների կողմից ստեղծված գրակիր հուշարձաններ:

բ) Ըստ գրային համակարգի բնույթի՝

1. բառային,

2. բառա-վանկային,

3. այբբենական:

գ) Ըստ գրանշանների արտաքին տեսքի՝

1. պատկերանշանային (այդ թվում՝ հիերոգլիֆ),

2. գծանշանային,

3. սեպանշանային,

4. տառային:

դ) Ըստ արձանագրությունների բովանդակության⁴⁴.

1. արքայական արձանագրություններ՝ նվիրված աստվածների պաշտամունքին,

2. ռազմական արշավանքների նկարագրություններ,

3. թագավորական նախնիներին ձոնված գրակիր կոթողներ,

4. թագավորական իշխանության և արքայի անձի աստվածացմանը վերաբերող արձանագրություններ,

5. արքայական հիշատակարաններ քաղաքների ու շինությունների (հատկապես՝ սրբավայրերի) հիմնադրման ու բարեկարգման մասին,

6. արձանագրություններ զանազան ծեսերի, արարողությունների (այդ թվում՝ մրցույթների) մասին,

7. նոր օրենքներ ու կարգեր սահմանող բնագրեր,

8. արքայական նվիրատվական արձանագրություններ,

9. թագավորական դրամների մակագրություններ,

10. արքայական նամակագրության արձանագրումներ,

11. հոգևոր-պաշտամունքային բազմաբնույթ բնագրեր,

⁴⁴ Այս դասակարգումը ստացել ենք այսօր վերծանված, հիմնականում օտարալեզու, արձանագրությունների հավաքման արդյունքում (տես Ա. Մովսիսյան, Նախաձեռնությունների Հայաստանի գրային համակարգերը, էջ 229-230): Հայալեզու արձանագրությունների հետագա վերծանությունը կարող է որոշակի փոփոխություններ մտցնել այս ցանկում:

12. ժամանակագրական-օրացուցային արձանագրություններ,
 13. ընծայագրեր,
 14. բարոյա-խրատական բովանդակությամբ չափածո ստեղծագործության (ողբերգությամբ) հատվածներ,
 15. պատմական բովանդակությամբ չափածո ստեղծագործության (ողբերգությամբ) հատվածներ,
 16. տապանագրեր (այդ թվում՝ չափածո եղերերգեր),
 17. պատկանելության ցույց տվող արձանագրություններ,
 18. տարողության նշաններ,
 19. մենանշաններ,
 20. դեռևս անհայտ բովանդակությամբ գրակիր հուշարձաններ:
- Նախամաշտոցյան Յայաստանի գրավոր մշակույթի հուշարձանները կարելի է խմբավորել նաև ըստ գրանյութի, գրության ուղղության և այլ հատկանիշների:

Բուն տեքստի վերջում գետեղված է երկու ցանկ: Առաջինը ***Յամառոտագրությունների ցանկն*** է, երկրորդը՝ ***Օգտագործված գրականության*** (896 միավոր):

Ատնախոսությունն ունի երեք ***հավելված*** (ընդհանուր առմամբ՝ 42 էջ): Հավելվածներից առաջինում ներկայացված է 178 նկար: Երկրորդ հավելվածում տեղ են գտել աշխատանքի նյութն ավելի լուսաբանող աղյուսակներ, որոնց թիվը 21-ն է: Երրորդ հավելվածում գետեղված են գրավոր մշակույթի հուշարձանների տարածման քարտեզները: Հինգ քարտեզներում, որոնք ունեն բացատրագրեր, կարելի է գտնել բոլոր հնավայրերը, որոնցից հայտնաբերվել են նախամաշտոցյան դպրության գրավոր հուշարձանները:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅՈՎ ՀԵՂԻՆԱԿԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԸ

ա) Մենագրություններ.

1. Մովսիսյան Ա.Ե., Հնագույն պետությունը Հայաստանում. Արատ-տա, ՀՅԴ հրատ., «Դեպի Երկիր» մատենաշար, Ե., 1992, 80 էջ:
2. Մովսիսյան Ա.Ե., Վանի թագավորության (Բիայնիլի, Ուրարտու, Արարատ) մեհենագրությունը, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Ե., 1998, 144 էջ:
3. Մովսիսյան Ա.Ե., Նախամաշտոցյան Հայաստանի գրային համա-կարգերը, ԵՊՀ հրատ., Ե., 2003, 400 էջ
4. Մովսիսյան Ա.Ե., Հայկական մեհենագրություն, ԵՊՀ հրատ., Ե., 2003, 272 էջ
5. Մովսիսյան Ա.Ե., Հայաստանը Քրիստոսից առաջ երրորդ հազար-ամյակում (ըստ գրավոր աղբյուրների), ԵՊՀ հրատ., Ե., 2005, 176 էջ:
6. Movsisyan A., Aratta: Kutsal yasalar ulkesi (*թուրքերեն՝* Արատտա. Սուրբ օրինաց երկիրը), Istanbul, 2001, 80 p..
7. Movsisyan A., The Writing Culture of pre-Christian Armenia – Yerevan University Publishers, Yerevan, 2006, 320 p.
8. Movsisyan A., L'héritage écrit de l'Arménie préchrétienne (Caractéristi-que générale), Université de Provence, Chaire d'Etudes Arméniennes, Aix-en-Provence, 2007, 32 p.

բ) Հոդվածներ.

9. Մովսիսյան Ա.Ե., Վանի թագավորության մեհենագրերը. Ընդիա-նուր բնութագիրը և վերծանության բանալին, «Հանդես Ամսօրեայ», 1996, թիվ 1-12, էջ 360-403:
10. Մովսիսյան Ա.Ե., Հայաստանի գծային գիրը (Ք.ա. III-I հազարամ-յակներ), «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», հ. XVIII, Ե., 1999, էջ 202-210:
11. Մովսիսյան Ա.Ե., Կարևոր մի ուղղում (Կարմիր բլուրի սեպագիր սալիկներից մեկի առնչությամբ), «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», հ. XIX, Ե., 2000, էջ 133-139:

12. Մովսիսյան Ա.Ե., Նոր սեպագիր այբուբեն² (Կարմիր բերդի առեղծվածային սեպագիր արձանագրության շուրջ), «Պատմա-բանասիրական հանդես», 2001, N 3, էջ 221-226:

13. Մովսիսյան Ա.Ե., Դիտարկումներ նախաքրիստոնեական Հայաստանի գրավոր մշակույթի ընդհանուր բնութագրման շուրջ, «Արևելք. պատմություն, քաղաքականություն, մշակույթ», (հոդվածների ժողովածու), Երևան, 2001, էջ 27-31:

14. Մովսիսյան Ա.Ե., Հայկական լեռնաշխարհում կիրառված գրային համակարգերը Ք.ա. 12-7-րդ դարերում: Վանի թագավորության (Բիայնիլի, Ուրարտու, Արարատ) պետական գրային քաղաքականությունը, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», հ. XIX, Ե., 2001, էջ 196-203:

15. Մովսիսյան Ա.Ե., Օտարների կողմից նախամաշտոցյան Հայաստանում թողնված գրավոր հուշարձանները և դրանց պատմական նշանակությունը, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», հ. XXI, Երևան, 2002, էջ 242-261:

16. Մովսիսյան Ա.Ե., Նորայայտ սեպագիր արձանագրութիւն բերձորեան քարանձաւից, «Հանդէս Ամսօրեայ», Վիեննա, 2002, թիւ 1-12, էջ 401-410:

17. Մովսիսյան Ա.Ե., «Ռուսա / Ուրսա» արքայանվան գրության և հնարավոր նշանակության մասին, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», հ. XXII, Երևան, 2003, էջ 234-238:

18. Մովսիսյան Ա.Ե., Թվերի նշան սկզբունքները նախամաշտոցյան Հայաստանի գրահամակարգերում և մաշտոցյան այբուբենի թվահամակարգը, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», հ. XXIII, Երևան, 2004, էջ 430-439:

19. Մովսիսյան Ա.Ե., Նախամաշտոցյան Հայաստանի գրավոր ժառանգությունը, «Պատմա-բանասիրական հանդես», 2005, N 2, էջ 87-100:

20. Մովսիսյան Ա.Ե., Նախամաշտոցյան Հայաստանի դպրության ավանդույթների շարունակությունը ոսկեդարյան գրականության մեջ, «Հարք» (Հայագիտական հանդես), 2006, N 1, էջ 60-73:

21. Մովսիսյան Ա.Ե., Գրային մշակույթի վիճակը IV դարի Հայաստանում, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», հ. XXV, Երևան, 2006, էջ 228-238:

22. Movsisyan A., Die so genannte “Erimena Tafel“, “Aramazd. Armenian Journal of Near Eastern Studies”, vol. I, Yerevan, 2006, p. 202-207, 291, table IX.

23. Movsisyan A., L'héritage écrit de l'Arménie préchrétienne, "Armenica", 2, La culture arménienne hier et aujourd'hui, Publications de l'Université de Provence, 2008, p. 55-64

24. Movsisyan A., The hieroglyphic script of Van Kingdom: The perspectives of decipherment, "Aramazd. Armenian Journal of Near Eastern Studies", vol. V, issue 1, Yerevan, 2010, p. 166-183.

25. Մովսիսյան Ա.Ե., Տիգրան Բ Մեծի օրոք ստեղծված գրավոր ժառանգության շուրջ, «Տիգրան Մեծ», Տիգրան Մեծի գահակալության 2100-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի (2005 թ.) նյութերի ժողովածու, Ե., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2011, էջ 104-109:

26. Մովսիսյան Ա.Ե., Հայաստանի մինչնաշտոցյան գրավոր ժառանգությունը (ընդհանուր բնութագրման փորձ), «Հայկական հարց», Աբովյանագիտական հայագիտական հասարակական-քաղաքական հանդես, Ե., 2013, N 2 (3), էջ 6-12:

* * *

Ատենախոսության հեղինակը նախամաշտոցյան դպրության մասին հեղինակել է **«Ժայռապատկերներից մինչև այրուբեն»** հայագիտական գիտահանրամատչելի ֆիլմը (2009 թ., 80 րոպե, հեղինակային իրավունքի գրանցման համարը «Հայհեղինակ»-ում՝ 08 / 467, տրված 03.06.2009 թ.):

Ֆիլմը ՀՀ Կրթության և գիտության նախարարության կողմից ճանաչվել է իբրև ուսումնասօժանդակ ձեռնարկ Հայաստանի և Սփյուռքի բոլոր ուսումնական հաստատությունների համար:

ПИСЬМЕННАЯ КУЛЬТУРА АРМЕНИИ
В ДОМАШТОЦОВСКУЮ ЭПОХУ

Диссертация на соискание ученой степени доктора исторических наук
по специальности 07.00.01. "История Армении"

Защита состоится 22-го сентября 2015 г., в 14⁰⁰ на заседании специализированного совета по Истории Армении 004 ВАК РА при Институте Истории НАН РА (0019, Ереван, пр. Маршала Баграмяна 24/4).

РЕЗЮМЕ

Письмо, как средство общения, сохранения памяти и накопления знаний, возникло на начальной стадии цивилизации. На территории Армянского нагорья в конце каменного века использовались самые ранние способы передачи мыслей (ранняя пиктография, "предметное письмо"). Генезис развитой пиктографии в Армении восходит к наскальным изображениям 5-3 тысячелетий до р. Х., а также к различным письменным объектам той же эпохи.

В середине 3-го тыс. до р. Х. в результате разработки и упрощения пиктографии было разработано линейное письмо Армении, которое использовалось до начала 1-го тыс. до р. Х. Сегодня в нашем распоряжении находятся около 300 надписей этой системы, которые были найдены в более чем 10 пунктах Республики Армения. Эти надписи остаются нерасшифрованными.

В 15-8 вв. до р. Х. в западной части Армянского нагорья (в долине Евфрата) использовались хетто-лувийские иероглифы.

В Ванском царстве (Биайнили, Урарту, Арарат) широко использовались клинописные системы. Царь Сардури I использовал ассирийское клинописное письмо. После него надписи на ассирийском представлены в двуязычных памятниках царей Урарту (Ишпуини, Менуа и Руса I).

В период царствования Ишпуини была создана местная система клинописи. До нас дошли более чем 600 больших и малых надписей этой системы, которая была расшифрована во второй половине 19-го века.

Из трех письменных систем Ванского царства лишь один имеет местное происхождение. Это иероглифическое письмо, содержащее около 300 иероглифов, которые написаны справа налево и сверху вниз. Ключ к расшифровке этой системы был найден в 1995 году: были расшифрованы и интерпретированы около 60 иероглифов. Некоторые факты позволяют предположить, что языком иероглифического письма Ванского царства был древнейший армянский.

После падения Ванского царства и до принятия христианство в качестве государственной религии в Армении использовались алфавитные системы письма. С 3-го века до р. Х. В Армении использовался греческий алфавит, со 2-го века до р. Х. до 2-го века н. э. – арамейский алфавит.

Судьба армянского иероглифического письма (մեհենագիր – “mehenagir”) с 6-го века до р. Х. до времен принятия христианства все еще остается плохо освещенной. Из сведений древних и средневековых авторов можно заключить, что в государственной переписке использовались иностранные алфавиты, а армянское иероглифическое письмо было ограничено храмовой средой.

После принятия христианства наряду с предыдущей религией в Армении было запрещено и армянское иероглифическое письмо. Однако использование иероглифов в Армении продолжилось в разных формах (в магических талисманах, в качестве знаков ремесленных мастеров, в качестве знаков сокращений – идеограмм, они появляются на стенах христианских храмов, на монетах царей Киликийской Армении и т.д.).

В начале IV века по приказу царя Трдата III в государственной переписке, в религиозных и образовательных сферах стали использовать греческий и сирийский языки. Этот порядок был прерван после свержения короля Хосрова (389 г.): в Восточной Армении официальным государственным языком становится средне-персидский (пехлеви), а сирийский продолжает использоваться в религиозных целях.

Существуют много письменных памятников неизвестного происхождения, среди которых выделяются две новые системы письма. Первая представляет собой новую клинописную систему Армении, созданную, вероятно, в до-урартскую эпоху. Вторая является системой загадочных гигантских символов. Есть также некоторые одиночные экземпляры загадочных надписей.

Отдельную группу составляют надписи, авторами которых являются иностранцы. Эти надписи появились на территории Армении в результате войн, торговли, экономических, культурных и других отношений. Они не являются частью армянской письменной культуры, но имеют важное значение для восстановления истории Древней Армении.

Результаты наших исследований проливают свет на историю письменной культуры Армянского нагорья. Становится очевидным, что в домаштоцовой Армении была создана значительная письменная культура. Высокий уровень развития армянской литературного языка V века (Золотого века армянской письменности) также свидетельствует о глубоких корнях письменной культуры в домаштоцовой Армении.

ARMENIAN WRITING CULTURE
IN PRE-MASHTOTSIAN EPOCH

Dissertation for the degree of the Doctor of Sciences (History)
on the specialization of "History of Armenia" 07.00.01.

The defense of the dissertation will be held on September 22, 2015, 14⁰⁰ at the session of the Specialized Council 004 on Armenian History of SQC RA by the Institute of History of the National Academy of Sciences of RA (0019, Yerevan, Marshal Baghramyan ave. 24/4).

SUMMARY

Writing as means of communication, preservation of memory and accumulation of knowledge originated in the initial stage of civilization, and then it became a bearer of values of civilization.

During the first stages of the writing culture's development (early pictography, "object writing") simple and earliest ways of ideas transmission were used in Armenian Highland. The origin of pictography in Armenia reflected in rock-carvings, as well as various objects dated back by specialists to the 5th-3rd millennia BC.

In the middle of the 3rd mill. BC a system of linear scripts (LSA) was elaborated (containing over 400 signs) through the development and simplifying of pictography. LSA was used till the beginning of the 1st mill. BC. About 300 inscriptions of this system were found in more than 10 sites in Republic of Armenia. These inscriptions still remain undeciphered, the same may be said about their writing direction.

In the 15th-8th centuries BC the Hittite-Luvian hieroglyphs were used in the west of the Armenian Highland, in the Euphrates' valley. The writing system contained about 500 hieroglyphs which had boustrophedon pattern of writing.

In the Kingdom of Van the cuneiform systems were widely used. At the time of King Sarduri I inscriptions in the Assyrian cuneiforms (about 600 signs, with the direction from left-to-right) and language were written. After him inscriptions in Assyrian were used in bilingual monuments of kings of Urartu (Ishpuini, Menua and Rusa I). At the time of King Ishpuini the local cuneiform system was created (about 200 signs, with the direction from left-to-right) of which more than 600 big and small inscriptions have been preserved.

Three writing systems were used in the kingdom of Van, one of which is of local origin. It is hieroglyphic writing containing about 300 hieroglyphs, which were written from right-to-left and from head-to-bottom. The key to the decipherment of this system was found in 1995. About 60 hieroglyphs have already been deciphered and interpreted, therefore we can assume that the language of the hieroglyphic writing of the Kingdom of Van was the ancient Armenian.

After the fall of the Kingdom of Van the alphabetic writing systems had been used until the period of conversion to Christianity as the state religion in Armenia.

Since the 3rd century BC had been used Greek alphabet (24 letters, direction of writing from left-to-right), which became widely used after conversion to Christianity as the state religion, especially in church life.

From the 2nd century BC to the 2nd century AD inscriptions in Aramaic alphabet were in use (right- to-left direction, 22 letters); the problem of their language is not finally solved yet.

The fortune of the Armenian hieroglyphic script (Mehenagir) used from the 6th century BC to the times of adoption of Christianity still remains undetermined. But as follows from ancient and medieval author's information, one can conclude that in the state correspondence foreign alphabets were used in that period and the usage of the Armenian hieroglyphic script was limited to temples.

By proclaiming Christianity as the state religion the Armenian hieroglyphic writing was banned along with previous religion. Anyhow until the present hieroglyphs continue to be used in Armenia as forms of magic script, as marks of artisan masters in the form of a single ideogram. They appear on walls of Christian temples, on coins of Cilician Armenia and as separate signaries attested in Armenian medieval manuscripts, being used also in applied art, etc.

After conversion to Christianity according to the order of King Trdat III Syriac was used along with Greek for writing at court, during religious sermons and in education. This order was interrupted after the dethronement of King Khosrov (389), when in Eastern Armenia Middle Persian (Pahlavi) was used at court writing. The Aramaic alphabet became the basis of both Syrian and Middle Persian alphabets (22 letters, direction of writing from right-to-left).

There is an important group of inscribed monuments of unknown and mysterious purpose, among which two exceptionally new writing systems found only in Armenia are clearly distinguished. One of them is a new cuneiform writing system probably created in pre-Urartian period. Today we have three inscriptions belonging to that system. The other one is a system of mysterious huge characters. Such writings were found in about 20 archaeological sites of the Armenian Highland. There are also some examples of enigmatic inscriptions.

Another group of inscriptions is represented by writings left in different sites of Armenia by the foreigners. They appeared here as a result of wars, trade, economic, cultural and other relations. They do not constitute a part of Armenian writing culture, anyhow, they are important in elucidation of Armenian history before Mashtots.

The high level of the development of the Armenian Golden Age literary language (the 5th c. AD) attests to deep roots of written culture and writing thought in pre-Mashtotsian Armenia.

The results of our studies spread light on the ancient history and culture of the Armenian Highland. The great writing culture, which was created in pre-Mashtotsian Armenia, is shown. The research allows us to estimate the place of the writing culture of pre-Mashtotsian Armenia in the world civilization.

